

PROJECT: ACADEMIC CITY
ԾՐԱԳԻՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ

**Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science,
Culture and Sport of the Republic of Armenia**

**Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն
կրթության և գիտության կոմիտե**

as the Client

որպես Պատվիրատու

QS Quacquarelli Symonds Limited,

Քյու էս Քուաքուարելլի Սիմոնդս Լիմիթիդ

as the Consultant

որպես Խորհրդատու

and

և

“Academic City” Fund

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամ

as the Beneficiary

որպես Շահառու

CONSULTANCY SERVICES AGREEMENT

for

Transforming Armenian Higher Education for Academic City

ԽՈՐՀՐԴՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝

**Ակադեմիական քաղաքի համար Հայաստանի բարձրագույն կրթության
փոխակերպման նպատակով**

THIS CONSULTANCY SERVICES AGREEMENT FOR TRANSFORMING ARMENIAN HIGHER EDUCATION FOR ACADEMIC CITY (the "Agreement") is dated 10 August 2026, and made by and between:

HIGHER EDUCATION AND SCIENCE COMMITTEE OF THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA, with address at 22 Orbeli Brothers Street, Yerevan 0028, Republic of Armenia (the "Client"), represented by its Chairman, Sargis Hayotsyan (Identification Card No. 011564788), acting based on the Client's charter;

QS QUACQUARELLI SYMONDS LIMITED, having its registered office at 1 Tranley Mews, Fleet Road, London, NW3 2DG, United Kingdom (the "Consultant"), represented by its President Nunzio Quacquarelli (Passport No. 157199037UK), acting based on the Consultant's charter; and

ACADEMIC CITY FUND, with registration number 222.160.1315877 and with address at Gitavan-2, Ashtarak 0204, Republic of Armenia (the "Beneficiary"), represented by its Director, Armen Simonyan (Identification Card No. 010663086), acting based on the Beneficiary's charter.

The Client, the Consultant, and the Beneficiary are referred to herein individually as a "Party" and together as the "Parties."

WHEREAS

- (i) The Government of the Republic of Armenia (the "Government") has undertaken the design, construction, and development of the Academic City Project (the "Project").
- (ii) The implementation of the Project is one of the key mechanisms for achieving the targets set by the State Programme for Education Development of the Republic of Armenia until 2030, including the target of increasing the international recognition of Armenia's scientific and educational system by ensuring that Armenia's higher education institutions are included among the top 500 in international ranking tables.

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (այսուհետ՝ «Պայմանագիր») կնքվել է 2026 թվականի օգոստոսի 10-ին հետևյալ կողմերի միջև.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ՝ իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0028, Օրբելի եղբայրների փող. 22 (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս նախագահ Սարգիս Հայոցյանի (նույնականացման քարտ համար՝ 011564788), որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա,

ՔՅՈՒ ԷՍ ՔՈՒԱԳՈՒԱՐԵԼԼԻ ՍԻՄՈՆԴՍ ԼԻՄԻԹԻԴ, որի գրանցված գրասենյակը գտնվում է 1 Թրանլի Մյուգ, Ֆլիթ Ռոդը, Լոնդոն, NW3 2DG, Միացյալ Թագավորություն հասցեում (այսուհետ՝ «Խորհրդատու»), ի դեմս իր նախագահ Նոնցիո Քուաքուրելլիի, (անձնագիր՝ 157199037UK), և գործում է Խորհրդատուի կանոնադրության հիման վրա, և

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՀԻՄՆԱԴՐԱՄ՝ գրանցման համար՝ 222.160.1315877, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Աշտարակ 0204, Գիտավան-2 (այսուհետ՝ «Շահառու»), ի դեմս տնօրեն Արմեն Սիմոնյանի (նույնականացման քարտ համար՝ 010663086), որը գործում է Շահառուի կանոնադրության հիման վրա:

Պատվիրատուն, Խորհրդատուն և Շահառուն այս Պայմանագրում առանձին կոչվում են «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր»:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ «Կառավարություն») նախաձեռնել է Ակադեմիական քաղաքի ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») նախագծումը, կառուցումը և զարգացումը,

Ծրագրի իրականացումը Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված թիրախների իրագործման առանցքային մեխանիզմներից է, այդ թվում՝ Հայաստանի գիտակրթական համակարգի միջազգային ճանաչման բարձրացման թիրախի ապահովման տեսանկյունից՝ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգային

վարկանիշային աղյուսակների լավագույն 500-ի շարքում ընդգրկման միջոցով,

- (iii) The Consultant is the world's leading provider of services, analytics and strategic insights to the higher education sector, with expertise in strengthening institutional performance and internationalisation, benchmarking, rankings-related analytics, research impact, reputation-building, student employability, and other strategic advisory services for universities, governments and higher education systems. In view of this expertise, the Consultant is well placed to support the transformation of the Armenian higher education sector and the Project by providing data-driven analysis, benchmarking, strategic performance insights, institutional development roadmaps and advisory support aimed at strengthening Armenian universities, enhancing their international competitiveness, and aligning the higher education system with national priorities and global benchmarks.

Խորհրդատուն բարձրագույն կրթության համաշխարհային մակարդակում ծառայությունների, վերլուծական լուծումների և տվյալաին եզրահանգումների համաշխարհային առաջատար մատակարար է, որն ունի փորձառություն ինստիտուցիոնալ կատարողականի ամրացման և միջազգայնացման, համեմատական գնահատման, վարկանիշավորման հետ կապված վերլուծությունների, հետազոտական ազդեցության, հեղինակության ստեղծման, ուսանողների զբաղունակության բարձրացման բնագավառներում, ինչպես նաև համալսարանների, կառավարությունների և բարձրագույն կրթության համակարգերի համար ռազմավարական այլ խորհրդատվական ծառայությունների ոլորտում: Հաշվի առնելով նշված փորձառությունը՝ Խորհրդատուն կարող է աջակցել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի փոխակերպմանը և Ծրագրին՝ տրամադրելով տվյալների վրա հիմնված վերլուծություն, համեմատական գնահատում, տվյալաին եզրահանգումներ, ինստիտուցիոնալ զարգացման ճանապարհային քարտեզներ և խորհրդատվական աջակցություն՝ ուղղված Հայաստանի համալսարանների ամրապնդմանը, դրանց միջազգային մրցունակության բարձրացմանը և բարձրագույն կրթության համակարգի համապատասխանեցմանը պետական առաջնահերթություններին ու համաշխարհային չափանիշներին,

- (iv) Pursuant to Instruction No. Ն/9.1/18998-2026 dated 4 August 2026 of the Minister of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia, the Client procured consulting services from the Consultant for the implementation of the Project through a single-source procurement procedure.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի օգոստոսի 4-ի N Ն/9.1/18998-2026 հանձնարարականի հիման վրա Պատվիրատուն Ծրագրի իրականացման նպատակով Խորհրդատուից խորհրդատվական ծառայությունների գնումն իրականացրել է մեկ անձից գնման ընթացակարգով,

NOW, THEREFORE the Parties enter into this Agreement and agree to be bound by the following terms and conditions of this Agreement.

ՈՒՄՏԻ, Կողմերը համաձայնեցին կնքել սույն Պայմանագիրը և ընդունել են դրա՝ ստորև ներկայացված պայմանները.

§ 1. Subject Matter of the Agreement

Պայմանագրի առարկան

- 1.1. Pursuant to this Agreement the Consultant agrees to provide to the Client the Services as defined in Clause 2.1 of the Agreement, and the Client agrees to pay for the Services.

Սույն Պայմանագրի համաձայն՝ Խորհրդատուն համաձայնում է Պատվիրատուին մատուցել Պայմանագրի 2.1 կետում սահմանված Ծառայությունները, իսկ Պատվիրատուն համաձայնում է վճարել այդ Ծառայությունների դիմաց:

- 1.2. Any annex to this Agreement constitutes an integral part of the Agreement and shall be binding on the Parties.

Սույն Պայմանագրի ցանկացած հավելված կազմում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր ուժ ունի Կողմերի համար:

- 1.3. No other terms apply between the Parties in respect of the subject matter of this Agreement other than this Agreement and each Party's standard terms and conditions (if any) are expressly excluded.

Կողմերի համար՝ սույն Պայմանագրի առարկայի շրջանակում որևէ այլ պայմաններ չեն կիրառվում բացի սույն Պայմանագրի պայմաններից: Յուրաքանչյուր Կողմի ստանդարտ պայմաններն ու կարգավորումները (առկայության դեպքում) հատուկ կերպով բացառվում են:

§ 2. Scope of the Services

Ծառայությունների շրջանակը

- 2.1. The Consultant undertakes to provide to the Client the services set out in Annex 1 (*Activities, Deliverables, Deadlines and Allocated Deliverable Prices: Transforming Armenian Higher Education for Academic City*) (the “**Annex 1**”) to this Agreement (the “**Services**”).
- 2.2. The Services shall be carried out by the Consultant for the implementation of the Project and for the benefit of the Beneficiary, commencing on August 10, 2026 (the “**Effective Date**”).
- 2.3. The Client has considered information available to it at the time of drawing up the Services. The Beneficiary shall not be entitled to request a change to the Services or any addition thereto directly from the Consultant. Insofar as the Client requests any additional services or changes to the Services (the “**Client's Change Request**”), the following provisions shall apply:
- (a) In case the Client requests any additional services or changes to the Services, the Client shall submit to the Consultant a Client's Change Request in writing. The Consultant will review the Client's Change Request and respond to such request in writing promptly, but in any event no later than within 10 (ten) working days. In its response, the Consultant shall specify:
- (i) whether the Client's Change Request is feasible and/or whether there are objective reasons (including but not limited to technical or legal constraints) that can impede the implementation of the Client's Change Request. If there are such objective reasons, Consultant shall inform the Client in advance and both Consultant and Client are free to negotiate to adjust the Client's Change Request so that it could be feasible for the Consultant to implement; and

Խորհրդատուն պարտավորվում է Պատվիրատուին մատուցել սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ծառայությունները (*Գործողություններ, ներկայացվելիք նյութեր, վերջնաժամկետներ և ներկայացվելիք նյութի արժեք. Ակադեմիական քաղաքի համար Հայաստանի բարձրագույն կրթության փոխակերպում*) (այսուհետ՝ «**Հավելված 1**») (այսուհետ միասին՝ «**Ծառայություններ**»):

Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի իրագործման նպատակով և ի շահ Ծահառուի՝ սկսած 2026 թվականի օգոստոսի 10-ից (այսուհետ՝ «**Ուժի մեջ մտնելու օր**»):

Պատվիրատուն Ծառայությունները սահմանելիս հիմնվել է այդ պահին իրեն հասանելի տեղեկության վրա: Ծահառուն իրավունք չունի անմիջականորեն Խորհրդատուից պահանջելու Ծառայությունների որևէ փոփոխություն կամ դրանց որևէ հավելում: Պատվիրատուի կողմից լրացուցիչ ծառայություններ կամ Ծառայությունների փոփոխություններ (այսուհետ՝ «**Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանք**») պահանջվելու դեպքում, կիրառվում են հետևյալ դրույթները:

Պատվիրատուի կողմից լրացուցիչ ծառայություններ կամ Ծառայությունների փոփոխություններ պահանջվելու դեպքում Պատվիրատուն Խորհրդատուին գրավոր ներկայացնում է Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանք: Խորհրդատուն դիտարկում է Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը և պատասխանում գրավոր ձևով անհապաղ, սակայն ոչ ուշ քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Պատասխանի մեջ Խորհրդատուն պետք է հստակեցնի:

- (i) արդյոք Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքն իրագործելի է, և (կամ) արդյոք առկա են օբյեկտիվ պատճառներ (ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ տեխնիկական կամ իրավական սահմանափակումներ), որոնք կարող են խոչընդոտել Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքի իրականացումը: Եթե առկա են նման օբյեկտիվ պատճառներ, Խորհրդատուն դրանց մասին նախապես տեղեկացնում է Պատվիրատուին, և Խորհրդատուն ու Պատվիրատուն իրավունք ունեն բանակցելու՝ Պատվիրատուի փոփոխության խնդրանքը

(ii) whether the implementation of such request affects the remuneration and/or deadlines for the provision of the Services.

փոխակերպելու այնպես, որպեսզի այն
Խորհրդատուի համար լինի իրագործելի, և
(ii) արդյոք Պատվիրատուի՝ փոփոխության
խնդրանքն ազդում է Ծառայությունների
մատուցման վարձատրության և (կամ)
վերջնաժամկետների վրա:

(b) If the Consultant confirms that Client's Change Request affects the remuneration and/or deadline for the provision of the Services, the Consultant is entitled to request additional remuneration and adjustment to the deadlines for the provision of the Services by submitting a proposal for the adjustment of the remuneration and deadlines. If the Client accepts such proposal, the Parties shall execute an amendment to the Agreement adjusting the remuneration and deadlines for the provision of the Services, as well as the scope of the Services as necessary. If the Client does not accept the proposal, then no amendment shall be made to the Agreement, the Client's Change Request shall not be accepted and no additional services may be requested from or rendered by the Consultant.

Եթե Խորհրդատուն հաստատում է, որ
Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքն ազդում է
Ծառայությունների մատուցման վարձատրության և
(կամ) վերջնաժամկետների վրա, ապա
Խորհրդատուն իրավունք ունի պահանջելու հավելյալ
վարձատրություն և Ծառայությունների մատուցման
վերջնաժամկետների փոփոխություն՝
ներկայացնելով համապատասխան առաջարկ: Եթե
Պատվիրատուն ընդունում է այդ առաջարկը, ապա
Կողմերը պետք է կնքեն սույն Պայմանագիրը
փոփոխող համաձայնագիր՝ փոփոխելով
վարձատրության չափը և Ծառայությունների
մատուցման վերջնաժամկետները, ինչպես նաև
Ծառայությունների շրջանակը՝ ըստ
անհրաժեշտության: Եթե Պատվիրատուն չի
ընդունում այդ առաջարկը, ապա Պայմանագրում
որևէ փոփոխություն չի կատարվում,
Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը չի
ընդունվում և որևէ լրացուցիչ ծառայություն չի
կարող պահանջվել կամ մատուցվում Խորհրդատուի
կողմից:

(c) If the Consultant confirms that a Client's Change Request does not affect the remuneration, and/or deadlines for the provision of the Services, the Parties shall execute an amendment to the Agreement adjusting only the scope of the Services per Client's Change Request. If the Consultant accepts Client's Change Request without requesting additional remuneration and/or deadlines, and the Parties execute the amendment on that basis, the agreed amendment shall be deemed to fully record the Parties' agreement on the remuneration and/or deadlines consequences of that Client's Change Request.

Եթե Խորհրդատուն հաստատում է, որ
Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը չի
ազդում վարձատրության և (կամ)
Ծառայությունների մատուցման
վերջնաժամկետների վրա, ապա Կողմերը պետք է
կնքեն սույն Պայմանագիրը փոփոխող
համաձայնագիր՝ փոփոխելով միայն
Ծառայությունների շրջանակը՝ Պատվիրատուի՝
փոփոխության խնդրանքին համապատասխան:
Եթե Խորհրդատուն ընդունում է Պատվիրատուի
փոփոխության խնդրանքը՝ առանց լրացուցիչ
վարձատրություն և/կամ վերջնաժամկետ
պահանջելու, և Կողմերն այդ հիմքով
Պայմանագրում կատարում են համապատասխան
փոփոխությունը, ապա համաձայնեցված
փոփոխությունը համարվում է Պատվիրատուի այդ
փոփոխության խնդրանքի՝ վարձատրության և/կամ
վերջնաժամկետի հետևանքների վերաբերյալ
Կողմերի համաձայնությունը լիովին արձանագրող:

2.4. If any time after the Effective Date, the Consultant reasonably believes that certain services supplemental to the Services are necessary for the implementation of the Project, the Consultant shall inform the Client and the Beneficiary of such additional services in writing stating the scope, deadlines and other specifications of such services and the additional remuneration for such services, if any (the "Consultant's Change Request"). If a

Եթե սույն Պայմանագիրն Ուժի մեջ մտնելու օրվանից
հետո ցանկացած պահի Խորհրդատուն ողջամտորեն
կարծում է, որ Ծառայությունները լրացնող որոշակի
ծառայություններ անհրաժեշտ են Ծրագրի
իրականացման համար, ապա Խորհրդատուն պետք
է գրավոր տեղեկացնի Պատվիրատուին և
Շահառուին այդ լրացուցիչ ծառայությունների
մասին՝ նշելով այդ ծառայությունների շրջանակը,
կատարման վերջնաժամկետները, այլ
առանձնահատկություններ և դրանց համար
հավելյալ վարձատրությունը՝ առկայության դեպքում

Consultant's Change Request affects the remuneration and/or deadlines for the provision of the Services, the Consultant shall submit a proposal for the adjustment of the remuneration and deadlines. If the Client accepts such proposal, the Parties shall execute an amendment to the Agreement adjusting the remuneration and deadlines for the provision of the Services, as well as the scope of the Services as necessary. Should the Client refuse or otherwise fail to approve the suggested supplements as advised necessary for the implementation of the Project, the Client shall have no claim against the Consultant regarding the quality of the Services or the Project result, insofar as such claim relates to or arises from the absence of the suggested changes or supplements.

(այսուհետ՝ «**Խորհրդատուի՝ փոփոխության խնդրանք**»): Եթե Խորհրդատուի՝ փոփոխության խնդրանքն ազդում է Ծառայությունների կատարման վարձատրության և (կամ) վերջնաժամկետների վրա, ապա Խորհրդատուն պետք է ներկայացնի վարձատրության և Ծառայությունների մատուցման վերջնաժամկետների փոփոխության առաջարկ: Եթե Պատվիրատուն ընդունում է ներկայացված առաջարկը, Կողմերը պետք է կնքեն սույն Պայմանագիրը փոփոխող համաձայնագիր՝ փոփոխելով վարձատրության չափը և Ծառայությունների մատուցման վերջնաժամկետները, ինչպես նաև Ծառայությունների շրջանակը՝ ըստ անհրաժեշտության: Եթե Պատվիրատուն մերժի կամ այլ կերպ չհաստատի առաջարկվող լրացումները, որոնք Խորհրդատուի կողմից մատնանշվել են որպես անհրաժեշտ՝ Ծրագրի իրականացման համար, ապա Պատվիրատուն Խորհրդատուի նկատմամբ որևէ պահանջ չի ունենա Ծառայությունների որակի կամ Ծրագրի արդյունքի վերաբերյալ՝ այն մասով, որքանով այդ պահանջը վերաբերում է կամ բխում է առաջարկվող փոփոխությունների կամ լրացումների բացակայությունից:

§ 3. Performance of the Services

Ծառայությունների մատուցումը

- 3.1. The Consultant shall provide the Services with due care and conscientiousness. In doing so, the Consultant shall consider, as far as necessary, the highest standards of research, analysis, scientific and academic practice.
- 3.2. In providing the Services, the Consultant is not subject to any instructions regarding the manner, the place, or the time of the provision of the Services save as may be set out in Annex 1.
 - (a) The main working location for the provision of the Services shall be the business premises of the Consultant in the United Kingdom. Any occasional site visits to the Republic of Armenia shall be specified in Annex 1 to the Agreement.
 - (b) The Consultant is free to determine which employees will be deployed to carry out the Services.
 - (c) The Consultant shall be free to determine the working days and hours designated for providing the Services under this Agreement provided that the Consultant shall ensure efficiency and timely provision of the Services pursuant to the terms of Annex 1. The Client and

Խորհրդատուն պետք է մատուցի Ծառայությունները պատշաճ և բարեխղճորեն: Ծառայությունները մատուցելիս Խորհրդատուն պետք է հաշվի առնի, որքանով անհրաժեշտ է և ողջամիտ, հետազոտության, վերլուծության, գիտության և ակադեմիական աշխատանքի բարձրագույն ստանդարտները:

Ծառայությունները մատուցելիս Խորհրդատուն չի ենթարկվում որևէ հրահանգի՝ Ծառայությունների մատուցման եղանակի, տեղի կամ ժամանակի վերաբերյալ, բացառությամբ եթե այդպես սահմանված լինի Հավելված 1-ում:

Ծառայությունների մատուցման հիմնական աշխատանքային վայրը Խորհրդատուի գործունեության վայրն է՝ Միացյալ Թագավորությունում: Հայաստանի Հանրապետության որոշակի վայրեր երբեմն այցելությունները նախատեսված են ըստ սույն Պայմանագրի Հավելված 1-ում:

Խորհրդատուն ազատ է Ծառայությունների մատուցման համար աշխատակիցների ընտրության հարցում:

Խորհրդատուն ազատ է սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման աշխատանքային օրերի և ժամերի ընտրության հարցում՝ պայմանով, որ Խորհրդատուն պետք է ապահովի Ծառայությունների՝ արդյունավետ և ժամանակին մատուցումը՝ համաձայն Հավելված 1-ի: Պատվիրատուն և Շահառուն՝ համատեղ կամ

the Beneficiary jointly or separately shall cooperate with the Consultant to facilitate the provision of the Services under this Agreement.

- 3.3. The Consultant may not assign, delegate or otherwise transfer any or all of its rights and obligations under this Agreement to third parties without the prior written agreement of the Client and the Beneficiary. The Consultant may subcontract to other companies and/or persons (the “Subcontractors”) to perform certain tasks in the provision of the Services. The Consultant shall inform the Client and the Beneficiary in writing where Subcontractors are to be engaged by the Consultant. The Consultant shall remain responsible to the Client and Beneficiary for any actions of and/or tasks performed by the Subcontractors in connection with this Agreement.

- 3.4. Within the first month of each Agreement Year, the Consultant shall provide the Client and the Beneficiary with an annual workplan setting out the activities to be undertaken during that Agreement Year, including, without limitation, the deliverables to be submitted and the approximate dates or periods of workshops and onsite visits.

During each Agreement Year, the Consultant shall provide the Client and the Beneficiary with semi-annual reports covering the activities actually implemented and the deliverables submitted during the preceding 6 (six)-month period.

“Agreement Year” shall refer to each 12-month period starting from the Effective Date.

- 3.5. Each deliverable specified in Annex 1 of this Agreement or in the annual workplans shall be submitted as a separate file by email to the Client and the Beneficiary. Where email submission is not possible due to file size, the deliverable may be provided via a direct download link from a temporary file-transfer or cloud storage service, provided that no login credentials are required. The Consultant shall clearly identify in writing the deliverables submitted, with reference to the deliverable number identified in Annex 1 or annual workplan. Deliverables shall not be submitted in the format of online platforms,

առանձին, պարտավորվում են համագործակցել Խորհրդատուի հետ՝ սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցումը հեշտացնելու նպատակով:

Խորհրդատուն չի կարող երրորդ անձանց զիջել, պատվիրակել կամ այլ կերպ փոխանցել այս Պայմանագրի շրջանակում իր իրավունքների և պարտավորությունների որևէ մասը կամ դրանց ամբողջությունը՝ առանց Պատվիրատուի և Շահառուի նախնական գրավոր համաձայնության: Խորհրդատուն կարող է ներգրավել այլ ընկերությունների և (կամ) անձանց (այսուհետ՝ «Ենթակապախու»)՝ Ծառայությունների մատուցման հետ կապված որոշակի առաջադրանքներ կատարելու համար: Ենթակապախուների ներգրավման դեպքում Խորհրդատուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին և Շահառուին: Խորհրդատուն պատասխանատվություն է կրում Պատվիրատուի և Շահառուի առջև սույն Պայմանագրի հետ կապված՝ Ենթակապախուների ցանկացած գործողությունների և/կամ իրականացված աշխատանքների համար:

Յուրաքանչյուր Պայմանագրային տարվա առաջին ամսվա ընթացքում Խորհրդատուն Պատվիրատուին և Շահառուին տրամադրում է տարեկան աշխատանքային պլան, որում ներկայացվում են տվյալ Պայմանագրային տարվա ընթացքում իրականացվելիք գործողությունները՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով, ներկայացվելիք նյութերը և աշխատարանների ու տեղում այցերի մոտավոր ամսաթվերը կամ ժամանակահատվածները:

Յուրաքանչյուր Պայմանագրային տարվա ընթացքում Խորհրդատուն Պատվիրատուին և Շահառուին տրամադրում է կիսամյակային հաշվետվություններ, որոնք ընդգրկում են նախորդ 6 (վեց) ամսվա ընթացքում փաստացի իրականացված գործողությունները և ներկայացված նյութերը:

«Պայմանագրային տարի» նշանակում է սույն Ուժի մեջ մտնելու օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատված:

Սույն Պայմանագրի Հավելված 1-ում կամ տարեկան աշխատանքային պլաններում նշված յուրաքանչյուր ներկայացվելիք նյութ պետք է ներկայացվի առանձին ֆայլով՝ էլեկտրոնային փոստով Պատվիրատուին և Շահառուին: Եթե ֆայլի չափի պատճառով էլեկտրոնային փոստով ներկայացումը հնարավոր չէ, ապա նյութը կարող է տրամադրվել ֆայլերի ժամանակավոր փոխանցման կամ ամպային պահեստավորման ծառայության ուղղակի ներբեռնման հղման միջոցով, եթե մուտքի տվյալներ չեն պահանջվում: Խորհրդատուն պետք է հստակ գրավոր նշի ներկայացված նյութը՝ հղում անելով Հավելված 1-ում կամ տարեկան աշխատանքային պլանում նշված նյութի համարին: Ներկայացվելիք

websites or other online systems which generally require permanent hosting, login, or password-protected access for the Client or Beneficiary.

- 3.6. Unless otherwise expressly agreed in writing by the Client and/or the Beneficiary, the Consultant shall ensure that all operational communication and coordination with Armenian stakeholder universities, public authorities and other local stakeholders in connection with the Services is carried out through the representative designated by the Client and/or the Beneficiary under Clause 4.1 of this Agreement.

For the purposes of this Clause, operational communication and coordination shall include, without limitation, the organisation of meetings, consultations, workshops, visits and stakeholder engagement activities in Armenia; submission of information, data, document or translation requests; coordination of participation by universities or other local stakeholders; communication of timelines, expected inputs or deadlines; and any matter requiring the coordination, input, support, approval or involvement of the Client and/or the Beneficiary.

The Consultant shall not, and shall ensure that its team members and Subcontractors do not, directly issue requests, instructions, deadlines, commitments or other coordination messages to Armenian stakeholder universities, public authorities or other local stakeholders in connection with the Services, except through the Local Coordinator (see Clause 4.3 of the Agreement) or with that Local Coordinator's prior written agreement.

Direct expert-to-expert or technical communication may take place only where this has been agreed in writing with the Local Coordinator. Such communication shall not be used to bypass the coordination mechanism set out in this Clause and shall not include formal requests, instructions, deadlines, commitments or matters requiring institutional coordination, unless the Local Coordinator is included in the communication or has otherwise agreed in writing. For the avoidance of doubt, any change to the Services shall be made only in accordance

նյութերը չպետք է ներկայացվեն առցանց հարթակների, կայքերի կամ այլ առցանց համակարգերի ձևաչափով, որոնք, որպես կանոն, պահանջում են մշտական հոսթինգ, մուտք կամ գաղտնաբառով պաշտպանված մուտք Պատվիրատուի կամ Շահառուի համար:

Եթե Պատվիրատուն և/կամ Շահառուն գրավոր ուղղակիորեն այլ բան չեն համաձայնել, Խորհրդատուն պետք է ապահովի, որ Ճառայությունների առնչությամբ Հայաստանի շահագրգիռ համալսարանների, պետական մարմինների և այլ տեղական շահագրգիռ կողմերի հետ ամբողջ գործառնական հաղորդակցությունը և համակարգումն իրականացվեն սույն Պայմանագրի 4.1 կետի համաձայն Պատվիրատուի և/կամ Շահառուի կողմից նշանակված ներկայացուցչի միջոցով:

Սույն կետի նպատակներով՝ գործառնական հաղորդակցությունը և համակարգումը ներառում են, սակայն չեն սահմանափակվում, Հայաստանում հանդիպումների, խորհրդակցությունների, աշխատարանների, այցերի և շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների կազմակերպմամբ, տեղեկությունների, տվյալների, փաստաթղթերի կամ թարգմանությունների տրամադրման պահանջների ներկայացմամբ, համալսարանների կամ այլ տեղական շահագրգիռ կողմերի մասնակցության համակարգմամբ, ժամկետների, ակնկալվող ներդրումների կամ վերջնաժամկետների վերաբերյալ հաղորդակցությամբ, ինչպես նաև ցանկացած հարցով, որը պահանջում է Պատվիրատուի և/կամ Շահառուի համակարգումը, ներդրումը, աջակցությունը, հաստատումը կամ ներգրավումը:

Խորհրդատուն չպետք է ուղղակիորեն ներկայացնի և պետք է ապահովի, որ իր թիմի անդամները և ենթակապալառուները ուղղակիորեն չներկայացնեն Ճառայությունների առնչությամբ որևէ պահանջ, ցուցում, վերջնաժամկետ, պարտավորություն կամ համակարգման բնույթի այլ հաղորդակցություն Հայաստանի շահագրգիռ համալսարաններին, պետական մարմիններին կամ այլ տեղական շահագրգիռ կողմերին՝ բացառությամբ Տեղական համակարգողի (տես Պայմանագրի 4.3 կետ) միջոցով կամ վերջինիս նախնական գրավոր համաձայնությամբ:

Փորձագետների միջև ուղղակի կամ տեխնիկական հաղորդակցությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ այդ մասին գրավոր համաձայնեցվել է Տեղական համակարգողի հետ: Նման հաղորդակցությունը չպետք է օգտագործվի սույն կետով սահմանված համակարգման մեխանիզմը շրջանցելու համար և չպետք է ներառի պաշտոնական պահանջներ, ցուցումներ, վերջնաժամկետներ, պարտավորություններ կամ ինստիտուցիոնալ համակարգում պահանջող հարցեր, բացառությամբ այն դեպքերի, երբ Տեղական համակարգողը ներառված է հաղորդակցությունում:

with the amendment/change procedure set out in this Agreement.

կամ գրավոր այլ կերպ համաձայնել է: Տարընթերցումից խուսափելու համար՝ Ծառայությունների ցանկացած փոփոխություն կատարվում է բացառապես սույն Պայմանագրով սահմանված փոփոխությունների կատարման կարգին համապատասխան:

§ 4. Cooperation, Local Coordination and Oversight by the Client and the Beneficiary

Պատվիրատուի և Շահառուի կողմից համագործակցությունը, տեղական մակարդակում համակարգումը և վերահսկողությունը ընդհանուր պարտավորությունները

4.1. The Client and the Beneficiary shall, jointly or separately:

Պատվիրատուն և Շահառուն՝ համատեղ կամ առանձին, պետք է՝

(a) use their best efforts to facilitate the Consultant's coordinated communication with relevant stakeholders in the Republic of Armenia for the collection of data, information, documents and institutional inputs necessary for the provision of the Services; and

գործադրեն իրենց լավագույն ջանքերը՝ աջակցելու Խորհրդատուի՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան շահագրգիռ կողմերի հետ համակարգված հաղորդակցությանը՝ Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տվյալների, տեղեկությունների, փաստաթղթերի և ինստիտուցիոնալ ներդրումների հավաքագրման նպատակով, և

(b) where necessary and reasonably available, provide the Consultant with access to suitable offices and conference rooms belonging to, or otherwise already available for use by, the Client and/or the Beneficiary, for field work, meetings, workshops and events taking place in the Republic of Armenia. For the avoidance of doubt, this obligation shall not require the Client or the Beneficiary to rent, procure or pay for any third-party venue, conference facility or other premises.

անհրաժեշտության դեպքում և ողջամտորեն հասանելի լինելու պայմանով՝ Խորհրդատուին ապահովել մուտք Պատվիրատուին և/կամ Շահառուին պատկանող կամ այլ կերպ նրանց օգտագործման համար արդեն հասանելի համապատասխան գրասենյակային տարածքներ և կոնֆերանսների սրահներ՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դաշտային աշխատանքների, հանդիպումների, աշխատարանների և միջոցառումների համար: Տարընթերցումից խուսափելու համար՝ սույն պարտավորությունը Պատվիրատուի կամ Շահառուի համար չի առաջացնում որևէ երրորդ անձին պատկանող տարածք, կոնֆերանսների սրահ կամ այլ վայր վարձակալելու, ձեռք բերելու կամ դրա համար վճարելու պարտավորություն:

4.2. The Client and the Beneficiary shall be entitled to maintain appropriate coordination and oversight over the processes, progress, quality, timelines, stakeholder engagement and local coordination related to the Services, without interfering with the Consultant's activities, professional independence, internal working methods or responsibility for the proper provision of the Services.

Պատվիրատուն և Շահառուն իրավունք ունեն պահպանելու Ծառայությունների հետ կապված գործընթացների, առաջընթացի, որակի, ժամկետների, շահագրգիռ կողմերի ներգրավման և տեղական համակարգման նկատմամբ պատշաճ համակարգում և վերահսկողություն՝ առանց միջամտելու Խորհրդատուի գործունեությանը, մասնագիտական անկախությանը, ներքին աշխատանքային մեթոդներին կամ Ծառայությունների պատշաճ մատուցման համար նրա պատասխանատվությանը:

4.3. Promptly following the Effective Date, the Client and/or the Beneficiary shall designate a

Ուժի մեջ մտնելու օրվանից անմիջապես հետո Պատվիրատուն և/կամ Շահառուն նշանակում են

representative authorised to act on their behalf with respect to the Services and the Project (the “**Local Coordinator**”). The Local Coordinator shall act as the principal coordination contact in Armenia for the Consultant and for the Consultant team’s operational communication with stakeholder universities, relevant Armenian public authorities and other local stakeholders.

ներկայացուցիչ, որը լիազորված է իրենց անունից հանդես գալու Ծառայությունների և Ծրագրի առնչությամբ (այսուհետ՝ «Տեղական համակարգող»): Նշանակված ներկայացուցիչը հանդիսանում է Հայաստանում Խորհրդատուի, ինչպես նաև շահագրգիռ համալսարանների, Հայաստանի համապատասխան պետական մարմինների և այլ տեղական շահագրգիռ կողմերի հետ Խորհրդատուի թիմի գործառնական հաղորդակցության հիմնական համակարգող կոնտակտային անձը:

4.4. The Client's and Beneficiary's obligations and rights set out in this Section shall be implemented through the Local Coordinator for operational coordination purposes. In this regard, the Local Coordinator shall, on behalf of the Client and/or the Beneficiary and within their respective competence, perform coordination, oversight and communication functions related to the Services and the Project, including, without limitation, the following:

Սույն բաժնում սահմանված՝ Պատվիրատուի և Ծահառուի պարտավորությունները և իրավունքները գործառնական համակարգման նպատակով իրականացվում են Տեղական համակարգողի միջոցով: Այդ առնչությամբ Տեղական համակարգողը, հանդես գալով Պատվիրատուի և/կամ Ծահառուի անունից և իր իրավասության շրջանակում, իրականացնում է Ծառայությունների և Ծրագրի հետ կապված համակարգման, վերահսկողության և հաղորդակցության գործառնական ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով.

- (a) coordinate communication between the Consultant’s team and the senior leadership of relevant Armenian public authorities, stakeholder universities and other local stakeholders, and participate in the Consultant team’s meetings with such senior leadership;
- (b) coordinate the collection and submission of information, documents and institutional inputs required by the Consultant’s team from the Armenian side for the provision of the Services, according to the Clause 4.5 of this Agreement;
- (c) review documents, requests and deliverables submitted by the Consultant’s team and communicate the Client’s and/or the Beneficiary’s comments, confirmations or decisions, as applicable;
- (d) inform the Consultant’s team of any circumstance within their knowledge that may affect the provision of the Services; and
- (e) coordinate, monitor and support stakeholder engagement and local coordination related to the Services, including planned meetings, consultations, workshops, visits, information requests and matters requiring Armenian-side input or support.

համակարգել հաղորդակցությունը Խորհրդատուի թիմի և Հայաստանի համապատասխան պետական մարմինների, շահագրգիռ համալսարանների և այլ տեղական շահագրգիռ կողմերի ղեկավար կազմի միջև, ինչպես նաև մասնակցել Խորհրդատուի թիմի՝ նշված ղեկավար կազմի հետ հանդիպումներին.

համակարգել Ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի թիմին հայկական կողմից անհրաժեշտ տեղեկությունների, փաստաթղթերի և ինստիտուցիոնալ ներդրումների հավաքագրումը և ներկայացումը՝ համաձայն Պայմանագրի 4.5 կետի.

ուսումնասիրել Խորհրդատուի թիմի կողմից ներկայացված փաստաթղթերը, պահանջները և ներկայացվելիք նյութերը և, ըստ կիրառելիության, հաղորդել Պատվիրատուի և/կամ Ծահառուի դիտարկումները, հաստատումները կամ որոշումները.

տեղեկացնել Խորհրդատուի թիմին իրեն հայտնի ցանկացած հանգամանքի մասին, որը կարող է ազդել Ծառայությունների մատուցման վրա, և

համակարգել, մշտադիտարկել և աջակցել Ծառայությունների հետ կապված շահագրգիռ կողմերի ներգրավմանը և տեղական համակարգմանը, ներառյալ՝ նախատեսվող հանդիպումները, Խորհրդակցությունները, աշխատարանները, այցերը, տեղեկատվության տրամադրման պահանջները և հայկական կողմից ներդրում կամ աջակցություն պահանջող հարցերը:

4.5. The Client and Beneficiary shall ensure that all state and non-state entities cooperate with the Consultant in a timely manner as required for the orderly progress of the Services without any additional fee. Should the Consultant require any information, data or documents to perform its obligations under this Agreement, it shall submit a written request to the representatives designated by the Client and the Beneficiary within a reasonable period before the date on which the Consultant expects to receive such materials (the “**Notice Period**”). The Notice Period shall be proportionate to the volume and complexity of the requested materials and shall in any case be no less than 20 (twenty) working days, unless otherwise agreed by the Parties in writing. The Client and the Beneficiary shall use their best efforts to provide the requested materials within the Notice Period; if they reasonably foresee that timely delivery of the requested materials to the Consultant is not feasible, they shall promptly notify the Consultant in writing, whereupon the Parties shall agree in good faith on a revised date for the submission of the relevant output.

The Client and the Beneficiary acknowledge that the Consultant's ability to provide the Services effectively is dependent on the Client's and/or the Beneficiary's full and timely cooperation, the lack of which may impact the quality and timeliness of the Services. The Consultant shall not be liable for any delay or non-performance of its obligations under this Agreement as a result of the Client's and/or Beneficiary's failure to comply with its obligations under this Agreement.

§ 5. Remuneration

5.1. The remuneration for the Consultant's Services under this Agreement (the “**Consultant's Services Fee**”) shall be **EUR 1,395,000** (one million three hundred and ninety-five thousand euros).

The Consultant's Services Fee set out under this Clause is inclusive of all fees, costs and

Պատվիրատուն և Շահառուն պետք է ապահովեն, որ բոլոր պետական և ոչ պետական մարմինները ժամանակին, առանց որևէ լրացուցիչ վճարի համագործակցեն Խորհրդատուի հետ՝ ապահովելու Ճառայությունների մատուցման գործընթացում կանոնավոր առաջընթացը: Եթե Խորհրդատուին անհրաժեշտ լինի որևէ տեղեկություն, տվյալներ կամ փաստաթղթեր՝ սույն Պայմանագրով իր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու համար, ապա Խորհրդատուն պետք է գրավոր պահանջ ներկայացնի Պատվիրատուի և Շահառուի կողմից նշանակված ներկայացուցիչներին՝ Խորհրդատուի կողմից այդ նյութերն ստանալու ակնկալվող ամսաթվից առաջ ողջամիտ ժամկետում (այսուհետ՝ «**Ծանուցման ժամկետ**»): Ծանուցման ժամկետը պետք է համաչափ լինի պահանջվող նյութերի ծավալին և բարդությանը և ցանկացած դեպքում չպետք է պակաս լինի 20 (քսան) աշխատանքային օրից, եթե Կողմերը գրավոր այլ բան չեն համաձայնեցրել: Պատվիրատուն և Շահառուն պետք է գործադրեն բոլոր հնարավոր ջանքերը՝ պահանջված նյութերը Խորհրդատուին Ծանուցման ժամկետում տրամադրելու համար: Եթե նրանք ողջամտորեն կանխատեսում են, որ Խորհրդատուին պահանջված նյութերի ժամանակին տրամադրումը հնարավոր չի լինի, ապա նրանք պարտավոր են այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Խորհրդատուին, որից հետո Կողմերը բարեխղճորեն կհամաձայնեցնեն համապատասխան ներկայացվելիք նյութի տրամադրման նոր ժամկետը:

Պատվիրատուն և Շահառուն ընդունում են, որ Խորհրդատուի՝ Ճառայությունները պատշաճ և արդյունավետ իրականացնելու կարողությունը պայմանավորված է Պատվիրատուի և/կամ Շահառուի կողմից լիարժեք և ժամանակին համագործակցությամբ, և նման համագործակցության բացակայությունը կարող է ազդել Ճառայությունների մատուցման որակի և ժամկետների վրա: Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով իր պարտավորությունների ուշացման կամ չկատարման համար, եթե դա պայմանավորված է Պատվիրատուի և/կամ Շահառուի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումով:

Վարձատրություն

Սույն Պայմանագրով նախատեսված՝ Խորհրդատուի Ճառայությունների վարձատրությունը (այսուհետ՝ «**Խորհրդատուի ծառայությունների վճար**») կազմում է **1,395,000** (մեկ միլիոն երեք հալուր իննսուներեք հազար) եվրո:

Սույն կետով սահմանված Խորհրդատուի ծառայությունների վճարը ներառում է սույն Պայմանագրով նախատեսված Ճառայությունների

expenses incurred by the Consultant in connection with the provision of the Services under this Agreement, including out-of-pocket expenses, travel-related and site-visit expenses, workshop attendance costs, and any ancillary expenses. For the avoidance of doubt, no additional fee, reimbursement or other amount shall be payable to the Consultant under this Agreement.

The Consultant shall organise its visits and shall be responsible for the financial planning and coordination of such visits (including budgeting and travel arrangements). Upon the Consultant's request, the Beneficiary shall provide on-site non-financial logistical support in connection with such visits, including coordination, introductions, scheduling, facilitation of on-the-ground arrangements, and support in coordinating transportation.

- 5.2. The Consultant's Services Fee shall be paid by the Client and in Euro (EUR (€)), referencing Consultant's invoice number. Payment shall be made by bank transfer and calculated using the exchange rate published by the Central Bank of the Republic of Armenia (CBA) on the payment date. For the avoidance of doubt, the reference to the CBA exchange rate shall not reduce the amount of the Consultant's Service Fee. Payment shall be made by bank transfer to the following bank account of the Consultant:

Account name: / Հաշվի անուն՝ QS QuacquarelliSymonds Ltd
Beneficiary address: / Ծախառուի հասցե՝ 1 Tranley Mews, Fleet Road, London, NW3 2DG, United Kingdom
Bank: / Բանկ՝ HSBC Bank Plc
Account number: / Հաշվի համար՝ 67753191
Sort code: 401276
Swift/BIC Code: HBUKGB4B
IBAN: GB90HBUK40127667753191

- 5.3. The Consultant's Services Fee shall be paid in the following installments, in accordance with the procedure set out in Clauses 5.4. and 5.5 of this Agreement:

(i) 1st payment in the amount of **EUR 105,000** as prepayment, after the signature of the Agreement;

մատուցման հետ կապված Խորհրդատուի բոլոր վճարները, ծախսերը և այլ ծախսումները, ներառյալ՝ ընթացիկ ծախսերը, ճանապարհորդության և տեղում այցելությունների հետ կապված ծախսերը, աշխատարաններին մասնակցության ծախսերը և ցանկացած այլ օժանդակ ծախս: Տարընթերցումից խուսափելու համար՝ սույն Պայմանագրի շրջանակում Խորհրդատուին որևէ լրացուցիչ վճար, ծախսերի փոխհատուցում կամ այլ գումար վճարման ենթակա չէ:

Խորհրդատուն կազմակերպում է իր այցելությունները և պատասխանատու է այդ այցելությունների ֆինանսական պլանավորման և համակարգման համար (ներառյալ բյուջետավորումը և ուղևորությունների հետ կապված կազմակերպչական աշխատանքները): Խորհրդատուի պահանջով Շահառուն պետք է ապահովի տեղում ոչ ֆինանսական լոգիստիկ աջակցություն՝ այդ այցելությունների հետ կապված, ներառյալ համակարգումը, ժամորոշությունները, ժամանակացույցը, տեղում կազմակերպչական աշխատանքների դյուրինացումը և տեղափոխման համակարգմանն ուղղված աջակցությունը:

Խորհրդատուի ծառայությունների վճարը վճարվում է Պատվիրատուի կողմից և եվրոյով (EUR (€))՝ նշելով Խորհրդատուի հաշիվ-ապրանքագրի համարը: Վճարումը կատարվում է բանկային փոխանցմամբ և հաշվարկվում է վճարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ԿԲ) հրապարակած փոխարժեքով: Տարընթերցումից խուսափելու համար՝ ԿԲ փոխարժեքին կատարված հղումը չի կարող նվազեցնել Խորհրդատուի ծառայությունների վճարի չափը: Վճարումը կատարվում է բանկային փոխանցմամբ Խորհրդատուի հետևյալ բանկային հաշվեհամարին.

Խորհրդատուի ծառայությունների վճարը վճարվում է հետևյալ փուլերով/չափերով՝ հաշվի առնելով նաև սույն Պայմանագրի 5.4 և 5.5 կետերում սահմանված ընթացակարգերը.

- (i) **1-ին վճարում՝ 105,000 եվրոյի չափով՝** որպես կանխավճար՝ Պայմանագրի ստորագրումից հետո,
(ii) **2-րդ վճարում՝ 430,000 եվրոյի չափով՝** մինչև ըստ Հավելված 1-ի 7-րդ ամիսը ներկայացման

(ii) **2nd payment** in the amount of **EUR 430,000** upon the submission of all the activities/deliverables due by the end of Month 7 as specified in Annex 1 of the Agreement;

(iii) **3rd payment** in the amount of **EUR 430,000** upon the submission of all the activities/deliverables due by the end of Month 18 as specified in Annex 1 of the Agreement;

(iv) **4th payment** in the amount of **EUR 430,000** upon the submission of all the activities/deliverables due by the end of Month 42 as specified in Annex 1 of the Agreement.

For the purposes of this Clause 5.3, no draft, discussion draft, working version, incomplete version, or version submitted for review/comments shall qualify as a submitted deliverable. A deliverable shall count as submitted under this Clause only if it is submitted by the Consultant as its complete version for acceptance under this Agreement.

5.4. Before the Consultant may issue an invoice for any installment of the Consultant's Services Fee, the Client and the Beneficiary must confirm in writing that neither the Client nor the Beneficiary has any reasonable objections as to the completeness, conformity with the requirements of this Agreement and/or quality of the relevant portion of the Consultant's Services/deliverables for which the Consultant is to submit an invoice.

Unless otherwise specified in this Clause, within 10 (ten) calendar days of receipt of the relevant deliverables from the Consultant, the Client and the Beneficiary shall either:

(i) confirm acceptance of the deliverables by providing the Consultant with a Handover and Acceptance Certificate signed by the Client and the Beneficiary, confirming the handover and acceptance of such deliverables and stating the amount to be invoiced for the

ենթակա բոլոր ներկայացվելիք նյութերի ներկայացման պահից, Պայմանագրի Հավելված 1-ի համաձայն՝ մինչև 7-րդ ամսվա վերջն ավարտի ենթակա բոլոր գործողությունների/ ներկայացվելիք նյութերի ամբողջական կատարումից (ներկայացումից) հետո,

(iii) **3-րդ վճարում՝ 430,000 եվրոյի** չափով՝ Պայմանագրի Հավելված 1-ի համաձայն՝ մինչև 18-րդ ամսվա վերջն ավարտի ենթակա ենթակա բոլոր գործողությունների/ ներկայացվելիք նյութերի ամբողջական կատարումից (ներկայացումից) հետո,

(iv) **4-րդ վճարում՝ 430,000 եվրոյի** չափով՝ Պայմանագրի Հավելված 1-ի համաձայն՝ մինչև 42-րդ ամսվա վերջն ավարտի ենթակա ենթակա բոլոր գործողությունների/ ներկայացվելիք նյութերի ամբողջական կատարումից (ներկայացումից) հետո:

Սույն 5.3 կետի նպատակներով՝ որևէ նախագիծ, քննարկման նախագիծ, աշխատանքային տարբերակ, ոչ ամբողջական տարբերակ կամ բացառապես դիտարկման/մեկնաբանությունների համար ներկայացված տարբերակ չի համարվում ներկայացված նյութ: Ներկայացվելիք նյութը սույն կետի իմաստով համարվում է ներկայացված միայն այն դեպքում, եթե այն Խորհրդատուի կողմից ներկայացվել է որպես իր ամբողջական տարբերակը՝ սույն Պայմանագրի համաձայն ընդունման նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ Հավելված 1-ով համապատասխան ներկայացվելիք նյութն ինքնին ուղղակիորեն բնորոշված է որպես նախնական:

Նախքան Խորհրդատուն կարող է ներկայացնել հաշիվ-ապրանքագիր Խորհրդատուի Ծառայությունների վճարի որևէ մասի համար, Պատվիրատուն և Շահառուն պարտավոր են գրավոր հաստատել, որ ոչ Պատվիրատուն, ոչ Շահառուն չունեն որևէ ողջամիտ առարկություն Խորհրդատուի մատուցած այն Ծառայությունների/ ներկայացված նյութերի համապատասխան մասի ամբողջականության, որակի և/կամ Պայմանագրին համապատասխանության մասով, որի համար Խորհրդատուն պետք է ներկայացնի հաշիվ-ապրանքագիր:

Եթե այլ բան նախատեսված չէ սույն կետով, ապա Խորհրդատուից համապատասխան ներկայացված նյութերը ստանալու օրվանից 10 (տաս) օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն և Շահառուն պարտավոր են՝

(i) հաստատել ներկայացված նյութերի ընդունումը՝ Խորհրդատուին տրամադրելով Պատվիրատուի և Շահառուի կողմից ստորագրված Հանձնման- ընդունման ակտ, որով հաստատվում են տվյալ նյութերի հանձնումը և ընդունումը, ինչպես նաև

relevant instalment of the Consultant's Services Fee ; or

- (ii) notify the Consultant in writing of any reasonable objections that such deliverables are incomplete or do not conform to the requirements of this Agreement, specifying such objections in reasonable detail.

Upon receipt of the Handover and Acceptance Certificate signed by the Client and the Beneficiary, the Consultant shall countersign and return the Certificate and may submit the corresponding invoice together therewith.

If the Client and the Beneficiary fail to provide either a signed Handover and Acceptance Certificate or written objections within such 10 (ten) calendar day period, the relevant deliverables shall be deemed accepted, and the Consultant shall be entitled to submit the corresponding invoice without further confirmation or execution of the Handover and Acceptance Certificate.

Notwithstanding the foregoing, where the Consultant submits, in aggregate, more than 50% (fifty per cent) of the deliverables required for the relevant instalment under Clause 5.3 in one batch, or in several submissions made within 3 (three) working days, the 10 (ten) calendar day review period under this Clause 5.4 shall not apply. In such case, the Client and the Beneficiary shall have not less than 20 (twenty) working days from receipt of the last deliverable comprised in that batch to review the submitted deliverables and either issue the Handover and Acceptance Certificate or notify the Consultant in writing of any reasonable objections in accordance with this Clause. Deemed acceptance, if applicable, shall arise only upon expiry of that extended review period.

- 5.5 Invoice for the Consultant's Services Fee are due for payment and payable without any deduction within 30 (thirty) calendar days from the date of receipt of the respective invoice. The Consultant shall submit invoices to the Client only by email to the address specified in Clause 15.1 of this Agreement, with the Beneficiary copied by email on each submission. If an invoice is submitted without copying the Beneficiary on the email, any resulting delay in receipt, review, or payment shall not be attributable to the Client, and the

նշվում է Խորհրդատուի ծառայությունների վճարի՝ հաշվով դուրսգրման ենթակա գումարը, կամ

- (ii) գրավոր ծանուցել Խորհրդատուին ցանկացած ողջամիտ առարկության մասին առ այն, որ տվյալ ներկայացված նյութերը ամբողջական չեն կամ չեն համապատասխանում սույն Պայմանագրի պահանջներին՝ նման առարկությունները ներկայացնելով ողջամիտ մանրամասնությամբ:

Պատվիրատուի և Շահառուի կողմից ստորագրված Հանձնման-ընդունման ակտը ստանալուց հետո Խորհրդատուն ստորագրում է և հետ է ուղարկում այդ ակտը, ինչպես նաև կարող է դրա հետ միասին ներկայացնել համապատասխան հաշիվը:

Եթե Պատվիրատուն և Շահառուն նշված 10 (տաս) օրացուցային օրվա ընթացքում չեն տրամադրում ո՛չ ստորագրված Հանձնման-ընդունման ակտ, ո՛չ էլ գրավոր առարկություններ, ապա համապատասխան ներկայացված նյութերը համարվում են ընդունված, և Խորհրդատուն իրավունք ունի ներկայացնելու համապատասխան հաշիվը՝ առանց լրացուցիչ հաստատման կամ Հանձնման-ընդունման ակտի կնքման:

Անկախ վերոգրյալից՝ եթե Խորհրդատուն 5.3 կետով համապատասխան փուլային վճարման համար պահանջվող ներկայացվելիք նյութերի ավելի քան 50%-ը (հիստուն տոկոսը) ներկայացնում է մեկ փաթեթով կամ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կատարված մի քանի ներկայացումներով՝ ընդհանուր առմամբ, ապա սույն 5.4 կետով նախատեսված 10 (տաս) օրացուցային օրվա դիտարկման ժամկետը չի կիրառվում: Այդ դեպքում Պատվիրատուն և Շահառուն իրավունք ունեն համապատասխան փաթեթում ներառված վերջին ներկայացվելիք նյութը ստանալու օրվանից հաշված ոչ պակաս քան 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում դիտարկելու ներկայացված նյութերը և կամ տրամադրելու Հանձնման-ընդունման ակտը, կամ սույն կետին համապատասխան գրավոր ծանուցելու Խորհրդատուին իրենց ցանկացած ողջամիտ առարկության մասին: Եթե կիրառելի է, ներկայացված նյութերը համարվում են ընդունված միայն նշված երկարաձգված դիտարկման ժամկետի ավարտից հետո:

Խորհրդատուի ծառայությունների վճարի համար հաշիվ-ապրանքագիրը ենթակա է վճարման և պետք է վճարվի՝ առանց որևէ նվազեցման, համապատասխան հաշիվ-ապրանքագրի ստացումից հետո՝ 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդատուն հաշիվ-ապրանքագրերը Պատվիրատուին է ներկայացնում միայն էլեկտրոնային փոստի միջոցով՝ սույն Պայմանագրի 15.1 կետում նշված հասցեով՝ յուրաքանչյուր ներկայացման ժամանակ էլեկտրոնային նամակում պատճենելով նաև Շահառուին: Եթե հաշիվ-ապրանքագիրը ներկայացվել է առանց Շահառուին

applicable payment period shall commence only upon re-submission of the invoice in accordance with the requirement of this clause.

Notwithstanding anything to the contrary in this Agreement, the Parties acknowledge that, due to the annual State budget allocation and payment authorisation procedures applicable to the Client, the Client is unable to process or make payments during the period commencing on 15 December of each calendar year and ending on 15 February of the following calendar year, inclusive (the "Budget Allocation Period"). Where the due date of any payment under this Agreement falls within the Budget Allocation Period, that due date shall automatically be deferred, without the need for any amendment to this Agreement or further notice, and the relevant payment shall be made no later than 10 (ten) working days following the expiry of the Budget Allocation Period. Any deferral in accordance with this Clause shall not constitute a delay, default or breach of this Agreement by the Client and shall not give rise to any penalty, interest, damages or right to suspend the Services under Clause 5.6.

էլեկտրոնային նամակի պատճենում դնելու, ապա դրա արդյունքում առաջացած ստացման, դիտարկման կամ վճարման ցանկացած ուշացում չի վերագրվի Պատվիրատուին, և կիրառելի վճարման ժամկետը կսկսի հաշվվել միայն այն պահից, երբ հաշիվ-ապրանքագիրը կրկին կներկայացվի՝ սույն կետի պահանջին համապատասխան:

Անկախ Պայմանագրի որևէ հակառակ դրույթից՝ Կողմերն ընդունում են, որ Պատվիրատուի նկատմամբ կիրառելի՝ պետական բյուջեի տարեկան հատկացումների և վճարումների թույլատրման ընթացակարգերով պայմանավորված՝ Պատվիրատուն յուրաքանչյուր օրացուցային տարվա դեկտեմբերի 15-ից մինչև հաջորդ օրացուցային տարվա փետրվարի 15-ը ներառյալ ժամանակահատվածում (այսուհետ՝ «Բյուջետային հատկացումների ժամանակահատված») չի կարող ձևակերպել կամ կատարել վճարումներ: Եթե Պայմանագրով նախատեսված որևէ վճարման վերջնաժամկետն ընկնում է Բյուջետային հատկացումների ժամանակահատվածում, ապա այդ վերջնաժամկետն ինքնաբերաբար հետաձգվում է՝ առանց Պայմանագրում փոփոխություն կատարելու կամ լրացուցիչ ծանուցում ներկայացնելու անհրաժեշտության, իսկ համապատասխան վճարումը կատարվում է Բյուջետային հատկացումների ժամանակահատվածի ավարտից հետո ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետին համապատասխան վճարման հետաձգումը չի համարվում Պատվիրատուի կողմից վճարման ուշացում, պարտավորության չկատարում կամ սույն Պայմանագրի խախտում և չի առաջացնում տույժ, տոկոսագումար, վնասների հատուցման պահանջ կամ սույն Պայմանագրի 5.6-րդ կետի համաձայն Ծառայությունների մատուցումը կասեցնելու իրավունք:

5.6 In the event that the Client fails to pay any of the Consultant's invoices by their due date, the Consultant may serve written notice on the Client requiring payment of the same. If the Client does not make payment of the relevant overdue invoice within 14 working days of the Consultant's written notice, the Consultant may immediately suspend the provision of any further Services until payment is made in full.

Եթե Պատվիրատուն չի կատարում Խորհրդատուի որևէ հաշիվ-ապրանքագրի վճարումը սահմանված ժամկետում, Խորհրդատուն իրավունք ունի Պատվիրատուին ուղարկել գրավոր ծանուցում՝ պահանջելով կատարել համապատասխան վճարումը: Եթե Պատվիրատուն Խորհրդատուի գրավոր ծանուցումը ստանալուց հետո 14 (տասնչորս) աշխատանքային օրվա ընթացքում չի վճարում տվյալ ժամկետանց հաշիվ-ապրանքագրի գումարը, Խորհրդատուն իրավունք ունի անմիջապես կասեցնել հետագա որևէ Ծառայությունների մատուցումը՝ մինչև վճարումը ամբողջությամբ կատարվի:

5.7 The Consultant shall be responsible for and shall pay (or cause to be paid) all taxes imposed upon the Consultant's net income and payroll taxes.

Խորհրդատուն պետք է կրի և վճարի (կամ նպաստի, որ վճարվեն) բոլոր հարկերը, որոնք գանձվում են Խորհրդատուի գումար 2 ահույթից և աշխատավարձերից:

5.8 Along with the first invoice under this Agreement, the Consultant shall provide the Client with a United Kingdom tax-residence

Սույն Պայմանագրով առաջին հաշիվ-ապրանքագրի հետ միասին Խորհրդատուն պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել Միացյալ

certificate dated within the previous 12 (twelve) months. For each subsequent invoice, the Consultant shall either confirm in writing that the existing certificate remains valid and that its tax-residence status is unchanged, or, if the certificate has expired or its status has altered, promptly furnish an updated certificate.

For the avoidance of doubt, provided that the Consultant has supplied to the Client a valid United Kingdom tax-residence certificate (or written confirmation of its continued validity), the Client shall make all payments under this Agreement without the withholding or deduction of any tax required by the applicable law. If, despite the provided certificate, such withholding or deduction is required by the applicable law, the Client shall, when making the payment to which the withholding or deduction relates, pay to the Consultant such additional amount as will ensure that the Consultant receives the same total amount that it would have received if no such withholding or deduction had been required.

- 5.9. After receipt of any payment under this Agreement, the Consultant, per Client's/Beneficiary's request, shall provide to the latter a formal written confirmation duly signed and stamped, confirming that the payment has been received. Such confirmation shall include at least: (i) the Agreement number and date; (ii) the received payment amount, currency and the bank account to which the payment is received; (iii) the date of receipt; and (iv) the relevant invoice reference.

The Parties agree that the confirmation letter issued under this clause shall constitute sufficient written evidence of payments received under this Agreement.

Թագավորությունում հարկային ռեզիդենտության վկայական, որը դրված է նախորդ 12 (տասներկու) ամիսների ընթացքում: Հաջորդող յուրաքանչյուր հաշիվ-ապրանքագրի դեպքում Խորհրդատուն պարտավոր է կամ գրավոր հաստատել, որ առկա վկայականը մնում է վավեր և իր հարկային ռեզիդենտության կարգավիճակը չի փոփոխվել, կամ, եթե վկայականը ժամկետանց է կամ կարգավիճակը փոփոխվել է, անհապաղ ներկայացնել արդիականացված վկայական:

Կասկածից խուսափելու համար նշվում է, որ եթե Խորհրդատուն Պատվիրատուին ներկայացրել է վավեր Միացյալ Թագավորության հարկային ռեզիդենտության վկայական (կամ դրա վավերության շարունակականության գրավոր հաստատում), ապա Պատվիրատուն պարտավոր է սույն Պայմանագրով նախատեսված բոլոր վճարումները կատարել՝ առանց որևէ հարկի պահման կամ նվազեցման, եթե նման պահում կամ նվազեցում պարտադրված է կիրառելի օրենսդրությամբ: Եթե, տրամադրված վկայականի առկայության պայմաններում, այնուամենայնիվ կիրառելի օրենսդրությունը պահանջում է նման պահում կամ նվազեցում, ապա Պատվիրատուն համապատասխան վճարումն իրականացնելու ժամանակ պարտավոր է Խորհրդատուին վճարել հավելյալ գումար, որը կապահովի, որ Խորհրդատուն ստանա այն նույն ամբողջական գումարը, որը կստանար, եթե նման պահում կամ նվազեցում չպահանջվեր:

Սույն Պայմանագրի համաձայն ցանկացած վճարում ստանալուց հետո, Խորհրդատուն, Պատվիրատուի/Շահառուի պահանջով, պետք է վերջինին տրամադրի պատշաճ կերպով ստորագրված և կնքված պաշտոնական գրավոր հաստատում առ այն, որ վճարումը ստացվել է: Այդպիսի հաստատումը պետք է ներառի առնվազն՝ (i) Պայմանագրի համարը և ամսաթիվը, (ii) ստացված վճարման գումարը, արժույթը, և բանկային հաշվեհամարը, որին ստացվել է վճարումը (iii) ստացման ամսաթիվը և (iv) համապատասխան հաշիվ-ապրանքագրի հղումը:

Կողմերը համաձայն են, որ այս կետի համաձայն տրված հաստատող նամակը բավարար գրավոր ապացույց է սույն Պայմանագրով ստացված վճարումների վերաբերյալ:

§ 6. Liability, Limitation of Damages Claims

Պատասխանատվություն, վնասի հատուցման պահանջների սահմանափակում

- 6.1. The Consultant shall be liable to the Client and/or Beneficiary for any damage caused by the Consultant, its employee, or Subcontractor in connection with the provision of Services under

Խորհրդատուն պատասխանատվություն է կրում Պատվիրատուի և/կամ Շահառուի առջև սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման հետ կապված՝ Խորհրդատուի, իր աշխատողների կամ ենթակապալառուի կողմից

this Agreement resulting from fraud, willful misconduct, or gross negligence. Any damage caused by ordinary negligence will be compensated only if a material contractual obligation is breached. The Consultant's total aggregate liability, including the compensation of damages to Client or Beneficiary under or in connection with this Agreement shall not exceed 100% (one hundred percent) of the Fixed Component of the Consultant's Service Fee set out in this Agreement.

If and to the extent that the Client and/or the Beneficiary is liable to the Consultant under this Agreement or applicable law for damage caused by ordinary negligence and breach of a material contractual obligation, the liability limitation set out in the third sentence of this Clause 6.1 shall apply equally.

For the avoidance of doubt, the limitations set out in this Clause 6.1 shall not limit Parties obligations set out in Clauses 13.2 and 13.3 in case of a Party's unilateral renouncement from the Services (i.e. termination of Agreement).

6.2. Insofar as permissible under the applicable laws to this Agreement, no Party shall be liable to the other Parties for any indirect loss of profits, loss of business, loss of revenue, loss of anticipated savings, or any other indirect or consequential loss or foreseeable or unforeseeable damages arising out of or in connection with this Agreement.

6.2. Notwithstanding any provision to the contrary, claims for damages based on injuries affecting a person's life, body or health will remain unaffected by the above limitations of liability.

6.3. In the event of improper fulfillment of an obligation under this Agreement, the payment of a default penalty or compensation for damages shall not release the Party from the obligation of specific performance (fulfilment in kind).

In case of failure to fulfill an obligation under the Agreement, the compensation of damages and payment of default penalties shall release the

խարդախությամբ, դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ պատճառված ցանկացած վնասի համար: Անփութությամբ պատճառված ցանկացած վնաս ենթակա է հատուցման միայն պայմանագրային էական պարտավորության խախտման դեպքում: Խորհրդատուի ընդհանուր համախառն պատասխանատվությունը, ներառյալ Պատվիրատուին կամ Շահառուին այս Պայմանագրի շրջանակում կամ դրա հետ կապված պատճառված վնասների փոխհատուցումը, չի կարող գերազանցել սույն Պայմանագրով նախատեսված՝ Խորհրդատուի ծառայությունների վարձատրության հաստատուն բաղադրիչի 100%-ը (մեկ հարյուր տոկոսը):

Եթե և այնքանով, որքանով Պատվիրատուն և/կամ Շահառուն սույն Պայմանագրի կամ կիրառելի օրենսդրության հիման վրա Խորհրդատուի առջև պատասխանատվություն է կրում սովորական անփութության և պայմանագրային էական պարտավորության խախտման հետևանքով պատճառված վնասի համար, ապա սույն 6.1 կետի երրորդ նախադասությամբ նախատեսված պատասխանատվության սահմանափակումը հավասարապես կիրառվում է նաև նման պատասխանատվության նկատմամբ

Տարընթերցումից խուսափելու համար, սույն՝ 6.1 կետով սահմանված սահմանափակումները չեն սահմանափակում Կողմերի պարտավորությունները, որոնք նշված են 13.2 և 13.3 կետերում, Կողմի կողմից Շառայություններից միակողմանի հրաժարման (այսինքն՝ Պայմանագրի դադարեցման) դեպքում:

Այնքանով, որքանով թույլատրելի է սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենսդրությամբ, ոչ մի Կողմ պատասխանատվություն չի կրում մյուս Կողմերի առջև սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված՝ շահույթի կամ ձեռնարկատիրական կորստի, եկամուտների կամ ակնկալվող խնայողությունների կամ որևէ անուղղակի կամ հետևանքային կորստի կամ կանխատեսելի կամ անկանխատեսելի վնասի համար:

Անկախ Պայմանագրի ցանկացած դրույթից՝ անձի կյանքին, մարմնին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների վրա վերոնշյալ սահմանափակումները չեն տարածվում:

Պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության անպատշաճ կատարելու դեպքում պայմանագրային տույժի կամ վնասների հատուցման վճարումը չի ազատում Կողմին համապատասխան պարտավորությունը բնեղենով կատարելու պարտավորությունից:

Պայմանագրով նախատեսված որևէ պարտավորություն չկատարելու դեպքում պայմանագրային տույժի կամ վնասների հատուցման

breaching Party from that obligation of specific performance.

For the purposes of this Clause 6.3, any delay in the submission of a deliverable beyond the applicable deadline set out in Annex 1, including any continued non-submission after such deadline, shall in all cases be deemed to constitute improper fulfilment of the relevant obligation and shall not be treated or interpreted as failure to fulfil that obligation.

For the avoidance of doubt, payment for the relevant Services and/or deliverables duly submitted and accepted in accordance with this Agreement shall remain payable. This shall not prejudice the Client's right to withhold payment for Services not rendered or not accepted, or to pursue any remedies available under this Agreement.

6.4. In the event that either Party (Consultant or Client) delays performance of its following main obligation under this Agreement, the non-breaching Party (Consultant or Client) shall be entitled to charge a contractual penalty of 0.1% per day, accruing from the day following expiry of a 20 (twenty) calendar day grace period until the date of actual performance, as follows:

(i) where the Consultant fails to submit a deliverable by the applicable deadline under Annex 1 or the relevant annual workplan and in due format and method of submission, the penalty shall be calculated on the amount of the next scheduled instalment of the Consultant's Services Fee;

(ii) where the Client fails to pay the relevant installment of the Consultant's Services Fee by the applicable due date, the penalty shall be calculated on the overdue amount.

In all cases, the aggregate amount of the penalty payable at any given time shall not exceed the amount of the relevant outstanding installment of the Consultant's Services Fee.

6.5. The Client may deduct (set off) any penalty due to the Client under the Clause 6.4 from the relevant installment payment. This set-off shall

վճարումը խախտող Կողմին ազատում են այդ պարտավորության բնեղենով կատարումից:

6.3 կետի նպատակներով՝ ներկայացվելիք նյութի՝ Հավելված 1-ով սահմանված համապատասխան վերջնաժամկետից հետո ներկայացման ցանկացած ուշացում, ներառյալ՝ այդ վերջնաժամկետից հետո դրա շարունակական չներկայացումը, բոլոր դեպքերում համարվում է համապատասխան պարտավորության անպատշաճ կատարում և չի կարող դիտվել կամ մեկնաբանվել որպես այդ պարտավորության չկատարում:

Տարընթերցումից խուսափելու համար՝ սույն Պայմանագրին համապատասխան պատշաճ ներկայացված և ընդունված Ծառայությունների դիմաց վճարումը ենթակա է կատարման: Սույն դրույթը չի սահմանափակում Պատվիրատուի իրավունքը՝ չվճարել կամ պահել վճարումը չմատուցված կամ չընդունված Ծառայությունների և/կամ ներկայացվելիք նյութերի համար, ինչպես նաև կիրառել սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած այլ իրավական միջոց:

Եթե սույն Պայմանագրով նախատեսված հիմնական պարտավորության կատարումը ուշացվում է Կողմերից որևէ մեկի՝ Խորհրդատուի կամ Պատվիրատուի կողմից, ապա չխախտող Կողմն իրավունք ունի գանձելու պայմանագրային տույժ՝ օրական 0.1% չափով, որը հաշվարկվում է 20 (քսան) օրացուցային օրվա արտոնյալ ժամկետի ավարտին հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարումը՝ հետևյալ կարգով.

(i) եթե Խորհրդատուն Հավելված 1-ով կամ համապատասխան տարեկան աշխատանքային պլանով սահմանված ժամկետում, ինչպես նաև սահմանված ձևաչափով և ներկայացման կարգով չի ներկայացնում որևէ արդյունք (deliverable), ապա տույժը հաշվարկվում է Խորհրդատուի Ծառայությունների վարձատրության՝ հաջորդ նախատեսված վճարման գումարի նկատմամբ.

(ii) եթե Պատվիրատուն սահմանված ժամկետում չի կատարում Խորհրդատուի Ծառայությունների վարձատրության համապատասխան վճարումը, ապա տույժը հաշվարկվում է ժամկետանց պարտավորության գումարի նկատմամբ

Բոլոր դեպքերում տվյալ պահին վճարման ենթակա պայմանագրային տույժի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Խորհրդատուի Ծառայությունների վարձատրության համապատասխան փուլի համար չվճարված (չկատարված) չափը:

Պատվիրատուն իրավունք ունի սույն Պայմանագրի 6.4 կետով իրեն վճարման ենթակա պայմանագրային տույժի գումարը հանել (հաշվանցել)

be reflected in the Handover and Acceptance Certificate mentioned in Clause 5.4. In case a penalty is due to the Consultant under Clause 6.4, the Consultant shall have the right to submit a written request to the Client for payment of the relevant penalty.

համապատասխան վճարումից: Այդ հաշվանցումը պետք է արտացոլված լինի 5.4 կետում նշված Հանձնման և ընդունման ակտում: Սույն Պայմանագրի 6.4 կետով Խորհրդատուին վճարման ենթակա տույժի դեպքում Խորհրդատուն իրավունք ունի Պատվիրատուին ներկայացնել գրավոր պահանջ՝ համապատասխան տույժի վճարումը պահանջելու համար:

Տույժի հաշվարկը դադարում է այն պահից, երբ խախտող կողմը սույն Պայմանագրին համապատասխան պատշաճ կերպով կատարում է համապատասխան պարտավորությունը:

- 6.5. No penalty shall apply, and the deadlines for deliverables in Annex I shall be extended accordingly, to the extent any delay in the performance of the Services or any resulting non-performance of the Consultant's obligations is caused by the Client's and/or the Beneficiary's failure to provide required timely cooperation, information or any other documentation within the timelines set forth in Section 4 of this Agreement. The Consultant may rely on this sub-clause only to the extent it has complied with the Notice Period requirements set forth in Clause 4.3 of this Agreement.

In such cases, the Consultant shall not be liable for the corresponding delay or resulting non-performance to the extent so caused.

Տույժ չի կիրառվի և Հավելված I-ում նշված ներկայացվելիք նյութերի վերջնաժամկետները համապատասխանաբար կերկարաձգվեն՝ այնքան, որքան Ծառայությունների մատուցման որևէ ուշացում կամ դրա հետևանքով Խորհրդատուի պարտավորությունների չկատարումը պայմանավորված է Պատվիրատուի և/կամ Ծահառուի կողմից սույն Պայմանագրի 4-րդ բաժնով սահմանված ժամկետներում պահանջվող համագործակցությունը չսպասիովելու հանգամանքով: Խորհրդատուն կարող է հղում կատարել սույն դրույթին միայն այն դեպքում և այնքանով, որքանով նա պահպանել է սույն Պայմանագրի 4.3 կետով սահմանված Ծանուցման ժամկետի պահանջները:

Այդպիսի դեպքերում Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում համապատասխան ուշացման կամ դրա հետևանքով առաջացած չկատարման համար՝ այնքանով, որքանով դրանք պայմանավորված են վերը նշված հանգամանքներով:

- 6.6. No penalty shall apply for any period during which the Services are suspended under Clause 5.6. For the avoidance of doubt, any suspension of the Services by Consultant under Clause 5.6 shall not automatically extend or shift any deadlines for submission of further deliverables under this Agreement, unless otherwise agreed in writing by the Parties.

Պայմանագրի 5.6 կետի հիման վրա Ծառայությունների կասեցման ընթացքում որևէ տույժ չի հաշվարկվում: Հակասությունը բացառելու համար՝ Խորհրդատուի կողմից Պայմանագրի 5.6 կետով նախատեսված կարգով Ծառայությունների ցանկացած կասեցում ինքնաբերաբար չի երկարաձգում կամ չի տեղափոխում սույն Պայմանագրով նախատեսված հաջորդող ներկայացվելիք նյութերի ներկայացման որևէ վերջնաժամկետ, եթե Կողմերի կողմից գրավոր այլ բան համաձայնեցված չէ:

- 6.7 Payment of the penalty is without prejudice to the Parties' other remedies under this Agreement (including premature termination according to the Agreement).

Տույժի վճարումը չի սահմանափակում Կողմերի՝ սույն Պայմանագրով նախատեսված այլ իրավական միջոցներից օգտվելու իրավունքը (ներառյալ՝ Պայմանագրի վաղաժամ դադարեցումը):

§ 7. Confidentiality, Non-disclosure

Փաղտնիություն, չբացահայտում

- 7.1. For the avoidance of doubt, the following provisions shall apply to the Parties regardless of any non-disclosure agreements signed between the Parties.
- 7.2. All information (including the terms of this Agreement) provided by either Party to the other Parties, which is identified or marked by the disclosing Party as confidential or proprietary information or that reasonably should be known to be confidential, shall be treated in a confidential manner and shall not be disclosed to any third party without the prior written consent of the disclosing Party, which consent shall not be unreasonably withheld. All confidential information that a disclosing Party provides to a receiving Party shall not be used by the receiving Party for any purpose not permitted under this Agreement.
- 7.3. Each Party shall have the right to disclose confidential information to its directors, officers, employees, agents, Subcontractors and representatives solely to the extent required for such Party to carry out its obligations under this Agreement and provided always that the persons to whom such disclosure is made will be informed of the confidential nature of such information and will be bound by confidentiality obligations to the same level to those contained in this Agreement.
- 7.4. Notwithstanding Clause 7.2. of this Agreement, confidentiality shall not apply to:
- (a) disclosure or use of any confidential information to the extent necessary to provide the Services or perform the obligations pursuant to this Agreement, provided that any disclosure to a third party is made subject to confidentiality obligations at the same level to those contained in this Agreement;
 - (b) information which, at the time of disclosure by the Party, has already been publicly available without any breach of confidentiality by the receiving Party;
- Կասկածից խուսափելու համար՝ անկախ Կողմերի միջև ստորագրված՝ տեղեկությունների չբացահայտման որևէ համաձայնագրից, Կողմերի նկատմամբ կիրառվում են հետևյալ դրույթները:
- Բոլոր այն տեղեկությունները (ներառյալ սույն Պայմանագրի դրույթները), որոնք տրամադրվել են Կողմերից մեկի կողմից մյուսներին և որոնք բացահայտող Կողմը նշել կամ սահմանել է որպես գաղտնի տեղեկատվություն կամ սեփականություն կամ որոնք ողջամտորեն պետք է համարվեն գաղտնի, պետք է համարվեն գաղտնի և չպետք է տրամադրվեն որևէ երրորդ կողմի առանց բացահայտող Կողմի նախնական գրավոր համաձայնության, որը չպետք է անհիմն կերպով չտրամադրվի: Բացահայտող Կողմի կողմից ստացող Կողմին տրամադրված գաղտնի տեղեկությունները ստացող Կողմի կողմից չպետք է օգտագործվեն սույն Պայմանագրով չորոշված որևէ նպատակով:
- Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի գաղտնի տեղեկությունը տրամադրելու իր տնօրեններին, պաշտոնատար անձանց, աշխատակիցներին, գործակալներին, ենթակապալառուներին և ներկայացուցիչներին բացառապես այն չափով, որքանով դա անհրաժեշտ է, որպեսզի տվյալ Կողմը կատարի սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, և պայմանով, որ այն անձինք, որոնց այդ տեղեկատվությունը տրամադրվում է, տեղեկացված կլինեն այդ տեղեկատվության գաղտնիության մասին և ենթակա կլինեն սույն Պայմանագրով նախատեսված կարգավորումներին նույնական՝ գաղտնիության վերաբերյալ կարգավորումների:
- Անկախ սույն Պայմանագրի 7.2. կետից՝ գաղտնիության վերաբերյալ կարգավորումները չեն կիրառվում հետևյալ դեպքերում.
- ցանկացած գաղտնի տեղեկատվության բացահայտում կամ օգտագործում այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Ծառայությունները մատուցելու կամ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելու համար՝ պայմանով, որ երրորդ կողմին ցանկացած տեղեկատվության տրամադրում ենթակա է սույն Պայմանագրով նախատեսված կարգավորումներին նույնական՝ գաղտնիության վերաբերյալ կարգավորումների,
- տեղեկատվություն, որը մի Կողմի կողմից բացահայտման պահին արդեն հասանելի է եղել հանրությանը՝ առանց ստացող Կողմի կողմից գաղտնիության վերաբերյալ կարգավորումների խախտման,

- (c) information which the disclosing Party has expressly authorized in writing to be disclosed; տեղեկատվություն, որը բացահայտող Կողմը գրավոր ձևով հստակորեն լիազորել է բացահայտել,
- (d) information which the receiving Party has obtained lawfully and without restriction as to confidentiality from other sources, provided that the disclosure and use of such confidential information does not violate any contractual obligations, legal provisions, or governmental orders; տեղեկատվություն, որը ստացող Կողմը ստացել է օրինականորեն և այլ աղբյուրներից՝ առանց տեղեկատվություն ստանալու համար գաղտնիության սահմանափակման՝ պայմանով, որ այդ գաղտնի տեղեկատվության բացահայտումն ու օգտագործումը չի խախտում որևէ պայմանագրային պարտավորություն, իրավական դրույթ կամ պետական մարմինների հրաման,
- (e) information which the receiving Party has developed without reference to the disclosing Party's confidential information; տեղեկատվություն, որը ստացող Կողմը մշակել է առանց բացահայտող Կողմի գաղտնի տեղեկատվությանը հղում կատարելու,
- (f) information which must be disclosed under the laws applicable to the Parties or this Agreement (including, where applicable, disclosures required under public procurement legislation). To the extent permissible, the Party that is required to disclose such information shall inform the other Parties as soon as reasonably practicable of such disclosure. The Consultant is hereby informed and acknowledges that, under applicable procurement legislation, the Client may be required to make mandatory disclosures regarding this Agreement, including its publication, and that no separate prior notice shall be required for such disclosure or publication. տեղեկություն, որը ենթակա է բացահայտման Կողմերի կամ սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենսդրությամբ (այդ թվում, կիրառելիության դեպքում, պետական գնումների օրենսդրությամբ պահանջվող բացահայտումները): Հնարավորության սահմաններում այն Կողմը, որը պարտավոր է բացահայտել նման տեղեկություն, պարտավորվում է մյուս Կողմերին այդ բացահայտման մասին տեղեկացնել հնարավորինս շուտ՝ ողջամիտ ժամկետում: Խորհրդատուն սույնով տեղեկացվում է և ընդունում է, որ կիրառելի գնումների օրենսդրության համաձայն Պատվիրատուն կարող է պարտավոր լինել Պայմանագրի վերաբերյալ կատարել պարտադիր բացահայտումներ, ներառյալ՝ սույն Պայմանագրի հրապարակումը, և նման բացահայտման կամ հրապարակման կապակցությամբ առանձին նախնական ծանուցում չի պահանջվում:
- 7.5. Should any governmental authority, court of law or any equivalent authority request information deemed confidential under this Agreement from any of the Parties, such Party shall not be liable for any breach of confidentiality under this Agreement resulting from such requested disclosure, provided that it takes immediate steps to inform the other Parties of the official request for disclosure. The other Parties shall have the right to contest any such official request for disclosure. Եթե որևէ պետական մարմին, դատարան կամ որևէ համարժեք մարմին Կողմերից որևէ մեկից պահանջի սույն Պայմանագրի համաձայն գաղտնի համարվող տեղեկատվություն, ապա պահանջը ստացած Կողմը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրի գաղտնիության վերաբերյալ կարգավորումների այնպիսի խախտման համար, որը բխում է բացահայտման պահանջից՝ պայմանով, որ պահանջը ստացած Կողմը անհապաղ քայլեր ձեռնարկի՝ մյուս Կողմերին պահանջի մասին տեղեկացնելու ուղղությամբ: Մյուս Կողմերն իրավունք ունեն վիճարկելու բացահայտման վերաբերյալ ցանկացած այդպիսի պաշտոնական պահանջ:
- 7.6. Each Party must carefully and securely store, in mutual interest, any documents provided to it for the purpose of performing the obligations under this Agreement. These documents shall be promptly returned or destroyed upon termination of this Agreement if so requested. Յուրաքանչյուր Կողմ պետք է խնամքով և ապահով կերպով պահպանի, փոխադարձ շահերից ելնելով, իրեն տրամադրված ցանկացած փաստաթուղթ՝ սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու նպատակով: Այդ փաստաթղթերը պետք է անհապաղ վերադարձվեն կամ ոչնչացվեն սույն Պայմանագրի դադարեցումից հետո՝ ըստ պահանջի:

- 7.7. The provisions of this Section 7 shall survive any termination or expiration of this Agreement for a period of 5 years from termination or expiration.

§ 8. Data Protection

- 8.1. Each Party shall process and use personal data in connection with this Agreement in accordance with the provisions of data protection laws applicable in its own jurisdiction (except for the case prescribed in Clause 8.4 of this Agreement) and exclusively for the purpose of performing its obligations under this Agreement. Each Party may regularly disclose to the other Party staff contact names, work email addresses and work telephone numbers in order to provide or receive the Services and to manage the relationship created by this Agreement.
- 8.2. Each Party shall take all necessary precautions, including implementing appropriate technical and organizational measures, to protect the security and confidentiality of personal data accessed and/or processed in connection with this Agreement against unauthorized or unlawful processing and against accidental loss, destruction, disclosure, damage or alteration.
- 8.3. Each Party shall not disclose or transfer personal data to third parties without prior written consent and/or instructions of the data subject and the other Party concerned.
- 8.4. If the sharing or processing of personal data under this Agreement is subject to *Regulation (EU) 2016/679 of the European Parliament and of the Council of 27 April 2016 on the protection of natural persons with regard to the processing of personal data and on the free movement of such data, and repealing Directive 95/46/EC, Directive 2002/58/EC of the European Parliament and of the Council of 12 July 2002 concerning the processing of personal data and the protection of privacy in the electronic communications sector (Directive on privacy and electronic communications, and the United Kingdom's Data Protection Act 2018 (the "Data*

Սույն 7-րդ բաժնի դրույթները շարունակում են գործել Պայմանագրի դադարեցման կամ ավարտի պահից սկսած՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

Տվյալների պաշտպանություն

Յուրաքանչյուր Կողմ պետք է մշակի և օգտագործի սույն Պայմանագրի հետ կապված անձնական տվյալները՝ համաձայն իր պետությունում կիրառելի անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության պահանջների (բացառությամբ Պայմանագրի 8.4 կետով նախատեսված դեպքի) և բացառապես սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է պարբերաբար մյուս Կողմին տրամադրել իր աշխատակազմի կոնտակտային տվյալները (անուն-ազգանունը, աշխատանքային էլեկտրոնային հասցեն և աշխատանքային հեռախոսահամարը) Ծառայությունների մատուցումն ու ստացումը ապահովելու, ինչպես նաև սույն Պայմանագրով ստեղծված հարաբերությունները կառավարելու նպատակով:

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ նախագծուշական միջոցները, ներառյալ՝ համապատասխան տեխնիկական և կազմակերպական միջոցներ՝ պաշտպանելու սույն Պայմանագրի առնչությամբ հասանելի դարձված և (կամ) մշակված անձնական տվյալների անվտանգությունն ու զաղտնիությունը չարտոնված կամ ապօրինի մշակումից և պատահական կորստից, ոչնչացումից, բացահայտումից, վնասից կամ խեղաթյուրումից:

Յուրաքանչյուր Կողմ անձնական տվյալները երրորդ կողմերի չպետք է բացահայտի կամ փոխանցի առանց տվյալների սուբյեկտի և շահագրգիռ մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության և (կամ) հրահանգի:

Եթե Պայմանագրով անձնական տվյալների փոխանցումը կամ մշակումը ենթակա է *Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2016 թվականի ապրիլի 27-ի 2016/679 (ԵՄ) կանոնակարգին՝ անձնական տվյալների մշակման շրջանակում ֆիզիկական անձանց պաշտպանության, այդ տվյալների ազատ տեղաշարժի և 95/46/ԵԽ հրահանգը չեղյալ համարելու մասին, Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 12-ի 2002/58/ԵԽ հրահանգին՝ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում անձնական տվյալների մշակման և զաղտնիության պաշտպանության մասին (Գաղտնիության և էլեկտրոնային հաղորդակցության մասին հրահանգ), Տվյալների պաշտպանության մասին Միացյալ Թագավորության 2018 թվականի օրենքին (այսուհետ՝ «Տվյալների պաշտպանության օրենսդրություն»), Կողմերը պետք է պահպանեն*

Protection Laws”), the Parties shall comply with the provisions of the Data Protection Laws.

Տվյալների պաշտպանության օրենսդրության դրույթները:

- 8.5. The Parties shall ensure all international transfers of personal data under this Agreement comply with the data protection laws applicable to the relevant transfer. Where required, the Parties shall implement appropriate safeguards to protect personal data during international transfers.

Կողմերը պարտավոր են ապահովել, որ սույն Պայմանագրի շրջանակներում անձնական տվյալների բոլոր միջազգային փոխանցումները համապատասխանեն տվյալ փոխանցման նկատմամբ կիրառելի՝ անձնական տվյալների պաշտպանության մասին կիրառելի օրենսդրությանը: Անհրաժեշտության դեպքում Կողմերը պետք է կիրառեն համապատասխան երաշխիքներ՝ միջազգային փոխանցումների ընթացքում անձնական տվյալները պաշտպանելու համար:

§ 9. Intellectual Property Rights

Մտավոր սեփականության իրավունքներ

- 9.1. All intellectual property rights in the deliverables developed or created by the Consultant as a direct result of the Services under this Agreement (including, without limitation, guides, guidelines, presentations, governance models, governance concepts, reports, visions, designs, strategy plans and action plans) shall become the exclusive property of the Client and the Beneficiary. Upon the Client’s payment of the relevant instalment of the Consultant’s Service Fee in accordance with this Agreement in respect of the submitted deliverables, subject to Clause 9.2 of this Agreement, all transferable (assignable) intellectual property rights in such deliverables shall automatically pass to and vest in the Client and Beneficiary by operation of this Agreement, without the need for any further act or separate assignment document. The Consultant shall, if reasonably requested by the Client or the Beneficiary, provide reasonable confirmatory assistance necessary to evidence or register such transfer where required by applicable law.

Սույն Պայմանագրի շրջանակում Խորհրդատուի կողմից՝ ծառայությունների մատուցման անմիջական արդյունքում մշակված կամ ստեղծված ներկայացվելիք նյութերի (ներառյալ՝ առանց սահմանափակման, ուղեցույցներ, ցուցումներ, ներկայացումներ, կառավարման մոդելներ, կառավարման հայեցակարգեր, հաշվետվություններ, տեսլականներ, նախագծեր, ռազմավարական ծրագրեր և գործողությունների ծրագրեր) նկատմամբ բոլոր մտավոր սեփականության իրավունքները դառնում են Պատվիրատուի և Շահառուի բացառիկ սեփականությունը: Սույն Պայմանագրին համապատասխան՝ ներկայացված նյութերի մասով Խորհրդատուի ծառայությունների վարձատրության համապատասխան փուլի/չափի վճարումը Պատվիրատուի կողմից կատարելու պահից սկսած՝ (հաշվի առնելով Պայմանագրի 9.2 կետի պայմանները) տվյալ ներկայացված նյութերի նկատմամբ փոխանցելի մտավոր սեփականության բոլոր իրավունքները ինքնաաշխատ կերպով փոխանցվում և վերապահվում են Պատվիրատուին և Շահառուին՝ սույն Պայմանագրի ուժով՝ առանց որևէ լրացուցիչ գործողության կամ իրավունքների փոխանցման առանձին փաստաթուղթ կազմելու անհրաժեշտության: Խորհրդատուն պարտավորվում է, Պատվիրատուի կամ Շահառուի հիմնավոր պահանջով, տրամադրել փոխանցման փաստը հաստատելու կամ դրա գրանցումն ապահովելու համար անհրաժեշտ հաստատող աջակցություն՝ այն դեպքերում, երբ դա պահանջվում է կիրառելի օրենսդրությամբ:

- 9.2. Each Party shall retain ownership of its all pre-existing intellectual property and/or materials. To the extent a Party’s pre-existing intellectual property and/or materials are necessarily used for performance of this Agreement, the other Party is hereby granted a non-exclusive, non-commercial, non-transferrable (except as specified in this

Յուրաքանչյուր Կողմ պահպանում է իր՝ նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտների և/կամ նյութերի նկատմամբ սեփականության իրավունքը: Այնքանով, որքանով որևէ Կողմի՝ նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտները և/կամ նյութերը պարտադիր կերպով օգտագործվում են սույն Պայմանագիրը կատարելու համար, մյուս Կողմին

Clause) licence to use, copy and modify such materials solely for the purposes of implementing this Agreement. No separate licence agreement shall be required for pre-existing intellectual property and/or materials, and for the purposes of this Clause, the remuneration for such licence is 1 (one) EUR (exclusive of VAT), which is included in the Consultant's Services Fee payable under this Agreement; no separate payment, fee adjustment or increase of Consultant's Services Fee shall arise in connection with such licence.

Notwithstanding the foregoing, where any pre-existing intellectual property and/or materials are incorporated in and/or attached to any deliverable submitted under this Agreement and are necessary for the Client and/or the Beneficiary to use or implement that deliverable for Project purposes, the licence to such embedded pre-existing intellectual property and/or materials shall survive the expiration or termination of this Agreement and shall remain in force for as long as the relevant deliverable is used for Project purposes.

Each Party warrants that, to the best of its knowledge:

- (i) it has the necessary rights to grant the licences under this clause, and
- (ii) that in granting such licences, the Party will not knowingly infringe the intellectual property rights of any third party.

For the avoidance of doubt, the Client and/or the Beneficiary may make the relevant deliverables, together with any incorporated and/or attached pre-existing intellectual property and/or materials, available to the universities who are stakeholders of the Services under Annex 1 this Agreement, and those stakeholder universities shall be entitled to use, copy and modify such pre-existing intellectual property and/or materials on

սույն Պայմանագրով տրամադրվում է ոչ բացառիկ, ոչ առևտրային և չփոխանցվող (բացառությամբ սույն կետում նշված դեպքի) թույլտվություն լիցենզիա՝ սույն Պայմանագրի գործողության ընթացքում այդ նյութերը օգտագործելու, պատճենելու և փոփոխելու՝ բացառապես սույն Պայմանագրի իրականացումն ապահովելու նպատակով: Նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության և/կամ նյութերի համար առանձին լիցենզային պայմանագիր չի պահանջվում, և սույն կետի նպատակներով այդպիսի լիցենզիայի դիմաց վարձատրությունը կազմում է 1 (մեկ) եվրո (առանց ԱԱՀ-ի), որը ներառված է սույն Պայմանագրով վճարման ենթակա Խորհրդատուի ծառայությունների վճարում, այդպիսի լիցենզիայի կապակցությամբ առանձին վճարում, վճարի ճշգրտում կամ Խորհրդատուի ծառայությունների վճարի ավելացում չպետք է առաջանա:

Անկախ վերոգրյալից, այն դեպքերում, երբ սույն Պայմանագրի շրջանակում ներկայացված որևէ նյութի մեջ ներառված և/կամ կցված են նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտներ և/կամ նյութեր, և դրանք անհրաժեշտ են Պատվիրատուի և/կամ Շահառուի կողմից տվյալ ներկայացված նյութը Ծրագրի նպատակներով օգտագործելու կամ իրականացնելու համար, ապա այդպիսի ներկառուցված նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտի և/կամ նյութերի նկատմամբ իրավունքները պահպանվում են նաև սույն Պայմանագրի ժամկետի ավարտից կամ դադարեցումից հետո և շարունակում է գործել այնքան ժամանակ, որքան ժամանակ տվյալ ներկայացված նյութն օգտագործվում է Ծրագրի նպատակներով:

Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ իր իմացության սահմաններում՝

- (i) ունի համապատասխան իրավունքներ՝ սույն կետում նշված իրավունքները տրամադրելու համար, և
- (ii) այդպիսի իրավունքներ տրամադրելիս՝ Կողմը գիտակցաբար չի խախտի որևէ երրորդ անձի մտավոր սեփականության իրավունքները:

Տարբերեցումից խուսափելու համար՝ Պատվիրատուն և/կամ Շահառուն կարող են համապատասխան ներկայացված նյութերը՝ դրանցում ներառված և/կամ դրանց կից ներկայացված նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտների և/կամ նյութերի հետ միասին, տրամադրել հասանելի դարձնել սույն Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված՝ Ծառայությունների շահագրգիռ կողմ հանդիսացող համապատասխան համալսարաններին, իսկ այդ շահագրգիռ համալսարաններն իրավունք ունեն նույն պայմաններով, ինչ սույն կետի համաձայն Պատվիրատուն և Շահառուն, օգտագործելու,

the same terms as the Client and the Beneficiary under this Clause.

For the purposes of this Clause, Party's "pre-existing intellectual property and/or materials" means any and all intellectual property rights that are owned by or licensed to the Party and which are or have been developed independently of this Agreement, even if developed during the term of this Agreement.

9.3. Upon expiration or termination of this Agreement, each Party shall, upon the request of the other Party, return or permanently delete the other Party's pre-existing intellectual property and/or materials received under this Agreement, except for:

- (i) any deliverables whose intellectual property rights have transferred to the Client under Clause 9.1,
- (ii) any pre-existing intellectual property and/or materials licensed under Clause 9.2, to the extent incorporated in, attached to, or otherwise necessary for the Client and/or the Beneficiary to use any deliverable submitted under this Agreement; and
- (iii) copies required to be retained by law (subject to confidentiality obligations under this Agreement).

պատճենելու և փոփոխելու այդ՝ նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտները և/կամ նյութերը:

Սույն կետի իմաստով Կողմի «նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտ և/կամ նյութեր» են համարվում մտավոր սեփականության ցանկացած և բոլոր օբյեկտները, որոնք պատկանում են Կողմին կամ որի նկատմամբ Կողմն ունի իրավունքներ (թույլտվություններ) և որոնք մշակվել կամ ստեղծվել են սույն Պայմանագրից անկախ՝ նույնիսկ եթե մշակվել են սույն Պայմանագրի գործողության ընթացքում:

Սույն Պայմանագրի կատարման ավարտից կամ դրա դադարեցումից հետո յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է, ըստ մյուս Կողմի պահանջի, վերադարձնել կամ մշտապես ջնջել (ոչնչացնել) սույն Պայմանագրի շրջանակում ստացված՝ մյուս Կողմի նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության օբյեկտները և/կամ նյութերը, բացառությամբ՝

- (i) այն ներկայացված նյութերի, որոնց նկատմամբ մտավոր սեփականության իրավունքները, սույն Պայմանագրի 9.1 կետի համաձայն, փոխանցվել են Պատվիրատուին,
- (ii) 9.2 կետի համաձայն լիցենզավորված նախապես գոյություն ունեցող այն մտավոր սեփականության և/կամ նյութերի, որոնք ներառված են, կցված են կամ այլ կերպ անհրաժեշտ են, որպեսզի Պատվիրատուն և/կամ Շահառուն օգտագործի սույն Պայմանագրի շրջանակում ներկայացված որևէ ներկայացվելիք նյութ, և
- (iii) այն պատճենների, որոնք պարտադիր է պահպանել օրենքով (սույն Պայմանագրով սահմանված գաղտնիության պարտավորությունների պահպանմամբ):

§ 10. Publicity and Publication

10.1. Subject to Clause 10.2 of this Agreement, neither Party shall use the name, crest, logo, trademark or registered image of the other Party nor the name of any employee or member of staff of the other Party or an affiliate entity for any purpose without the express written permission of the other Party or individual. Nothing in this clause shall restrict, delay, impede or prevent a Party from using the other Party's name when making statutory disclosures under the legislation of its own jurisdiction.

10.2. Subject to Section 7 of this Agreement, the Client hereby agrees that the Consultant and/or its

Հանրայնացում և հրապարակում

Հաշվի առնելով սույն Պայմանագրի 10.2-րդ կետի պայմանները՝ Կողմերից և ոչ մեկը չպետք է օգտագործի մյուս Կողմի անվանումը, գինանշանը, լոգոն, ապրանքանիշը կամ գրանցված պատկերանշանը, ինչպես նաև մյուս Կողմի կամ նրան փոխկապակցված անձի որևէ աշխատողի կամ անձնակազմի անդամի անունը որևէ նպատակով՝ առանց տվյալ Կողմի կամ անձի հստակ գրավոր թույլտվության: Սույն կետում ոչինչ չի սահմանափակում, չի ուշացնում, չի խոչընդոտում և չի արգելում Կողմին օգտագործել մյուս Կողմի անունը՝ իր օրենսդրությամբ սահմանված պարտադիր բացահայտումներ կատարելիս:

Հաշվի առնելով սույն Պայմանագրի 7-րդ բաժինը՝ Պատվիրատուն սույնով համաձայնում է, որ

affiliate entity may in discussions with prospective clients and in its promotional materials make reference to having undertaken services for the Client including a brief description of those services. The Client may withdraw permission for the Consultant and/or its affiliate to use its name in this manner at any time by giving written notice.

Խորհրդատուն և (կամ) նրա փոխկապակցված անձը կարող են հնարավոր պատվիրատուների հետ քննարկումների ընթացքում և իրենց գովազդային նյութերում հղում անել Պատվիրատուի համար մատուցված ծառայություններին, այդ թվում՝ դրա համառոտ նկարագրությանը: Պատվիրատուն կարող է ցանկացած պահի գրավոր ծանուցմամբ հետ վերցնել Խորհրդատուից և (կամ) նրա փոխկապակցված անձից իր անունը նման եղանակով օգտագործելու թույլտվությունը:

10.3. For purposes of Section 10 of this Agreement:

Սույն Պայմանագրի 10-րդ բաժնի խմաստով՝

(a) ‘Affiliate entity’ shall mean any entity that controls, is controlled by, or is under common control with a Party;

«Փոխկապակցված անձ» նշանակում է ցանկացած կազմակերպություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է, վերահսկվում է կամ գտնվում է ընդհանուր վերահսկողության ներքո որևէ Կողմի կողմից.

(b) ‘Control’ shall mean possessing, directly or indirectly, the power to direct or cause the direction of the management, policies or operations of an entity, whether through ownership of voting securities, by contract or otherwise.

«Վերահսկողություն» նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրավասու լինել ղեկավարել կազմակերպությունը, ուղղորդել դրա քաղաքականությունը կամ գործունեությունը՝ քվեարկող արժեթղթերի ունենալու, պայմանագրի կամ այլ միջոցներով:

§ 11. Conflicts of Interest

Շահերի բախում

11.1 For the avoidance of doubt, this Agreement is non-exclusive and the Consultant may provide similar services to other clients during the Agreement term.

Տարբերությունից խուսափելու համար՝ սույն Պայմանագիրը բացառիկ չէ, և Պայմանագրի գործողության ընթացքում Խորհրդատուն կարող է ծառայություններ մատուցել այլ պատվիրատուներին:

11.2 The Consultant shall ensure that any other engagement does not create a conflict of interest with the proper performance of the Services. If the Consultant becomes aware of any actual or potential conflict, it shall promptly notify the Client in writing with details. The Parties shall discuss in good faith any reasonable mitigation measures. Where the risk of conflict cannot be reasonably mitigated, the Consultant shall not proceed with (or shall cease) the conflicting engagement to the extent necessary to comply properly and in good faith with this Agreement.

Խորհրդատուն պարտավոր է ապահովել, որ իր ցանկացած այլ համագործակցություն չառաջացնի շահերի բախում սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների պատշաճ մատուցման հետ: Եթե Խորհրդատուն տեղեկանում է առկա կամ հնարավոր շահերի բախման մասին, ապա պարտավոր է անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝ տրամադրելով մանրամասներ: Կողմերը պարտավոր են բարեխղճորեն քննարկել հնարավոր ռիսկերի մեղմման միջոցները: Եթե շահերի բախման ռիսկը ողջամտորեն հնարավոր չէ մեղմել, ապա Խորհրդատուն պարտավոր է չշարունակել (կամ դադարեցնել) տվյալ համագործակցությունը՝ այնքանով, որքանով անհրաժեշտ է սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները պատշաճ ու բարեխղճորեն կատարելու համար:

§ 12. Force Majeure

Անհաղթահարելի ուժ

12.1. “Force Majeure” means any extraordinary and unforeseeable circumstance that is beyond a Party’s reasonable control and which:

«Անհաղթահարելի ուժ» նշանակում է ցանկացած արտակարգ և անկանխելի հանգամանք, որը Կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս է և որը՝

- (i) could not have been foreseen at the time of signing this Agreement;
- (ii) renders the proper fulfilment of that Party's obligations impossible; and
- (iii) has not been caused by, nor can it be avoided by, the affected Party's negligence or failure to take reasonable precautions.

- (i) անհնար էր կանխատեսել սույն Պայմանագիրն ստորագրելու պահին,
- (ii) անհնարին է դարձնում տվյալ Կողմի պարտավորությունների պատշաճ կատարումը, և
- (iii) պայմանավորված չէ տվյալ Կողմի մեղքով, անփութությամբ կամ ողջամիտ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու բացակայությամբ, ինչպես նաև չէր կարող ողջամտորեն կանխվել նրա կողմից:

12.2. For the avoidance of doubt, "Force Majeure" shall not include:

- (i) any failure by the Party's employees or Subcontractors to perform their obligations;
- (ii) shortages of labour, materials or supplies which are available in the marketplace; or
- (iii) lack of funds or financial inability to pay.

Կասկածից խուսափելու համար՝ «Անհաղթահարելի ուժի» հասկացության շրջանակում չեն ընդգրկվում՝

- (i) պարտականությունների խախտումը Կողմի աշխատողների կամ ենթակապալառուների կողմից,
- (ii) աշխատուժի, նյութերի կամ մատակարարումների պակասը, որոնք առկա են շուկայում, կամ
- (iii) միջոցների բացակայությունը կամ վճարունակ չլինելը:

12.3. Force Majeure includes, but is not limited to:

- (i) natural or technological disasters, epidemics and pandemics, or extraordinary manifestations of nature (e.g. floods, earthquakes, tsunamis, hurricanes, tornadoes, lightning-driven storms, blizzards, landslides, wildfires, nuclear, chemical or biological contamination), strikes, civil unrest, collapse of buildings, fire, explosion;
- (ii) rebel uprisings, terrorism, war, invasion, armed conflict, external enemy action, blockade, sanctions, embargoes or severance of diplomatic relations;
- (iii) acts or omissions of any government or public authority (including adopting new normative legal acts, export/import restrictions, quotas, prohibitions, or refusal to grant licences or consents necessary for the provision of the Services).

Ի թիվս այնի, Անհաղթահարելի ուժ է համարվում՝

- (i) բնական կամ տեխնոլոգիական աղետները, համաճարակները և պանդեմիաները, կամ բնության արտասովոր դրսևորումները (օրինակ՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, ցունամիներ, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակի ուղեկցությամբ հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ, անտառային հրդեհներ, միջուկային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում), գործադուլներ, քաղաքացիական անկարգություններ, շենքերի փլուզումներ, հրդեհ, պայթյուններ,
- (ii) ապստամբություններ, ահաբեկչություն, պատերազմ, ներխուժում, զինված հակամարտություններ, արտաքին թշնամու գործողություններ, շրջափակում, պատժամիջոցներ, էմբարգոներ կամ դիվանագիտական հարաբերությունների խզում,
- (iii) պետական որևէ մարմնի կամ հանրային իրավասու մարմնի գործողություններ կամ անգործություն (ներառյալ՝ նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունում, արտահանման/ ներմուծման սահմանափակումներ, քվոտաներ, արգելքներ կամ թույլտվությունների կամ համաձայնությունների տրամադրման մերժում, որոնք անհրաժեշտ են ծառայությունների մատուցման համար):

12.4. If a Party is prevented from properly performing any of its obligations under this Agreement by Force Majeure:

- (i) that Party shall not be in breach of such obligation and shall have no liability for non-performance to the extent it is attributable to the Force Majeure;

Եթե Կողմը, Անհաղթահարելի ուժի պատճառով, չի կարողանում պատշաճ կերպով կատարել սույն Պայմանագրով սահմանված իր որևէ պարտավորություն, ապա՝

- (i) համարվում է, որ այդ Կողմը չի խախտել իր պարտավորությունը և ազատվում է այդ չկատարման համար պատասխանատվությունից այնքանով, որքանով դա պայմանավորված է Անհաղթահարելի ուժով,

- (ii) performance of the affected obligation shall be suspended for the duration of the Force Majeure; and
- (iii) the other Party's obligations under this Agreement shall be suspended to the same extent.

12.5. The affected Party shall bear the burden of proving that each of the conditions in Clause 12.1 has been satisfied.

12.6. The Party affected by Force Majeure shall:

- (i) give written notice to the other Party as soon as reasonably practicable (and in any event within 10 (ten) days) after becoming aware of the Force Majeure, specifying the nature of the event, its expected duration, and the obligations affected;
- (ii) use all reasonable endeavours to mitigate, remove or overcome the effect of Force Majeure and resume performance as soon as reasonably practicable; and
- (iii) keep the other Party informed of any developments and anticipated resumption date.

12.7 If the Force Majeure or its consequences continue to prevent the provision of the Services for more than 60 (sixty) days from the date of the initial notice, either Party may terminate this Agreement by giving 14 (fourteen) days' written notice to the other Party, whereupon neither Party shall have any further liability except for obligations accrued prior to termination date.

- (ii) տվյալ պարտավորության կատարումը կասեցվում է Անհաղթահարելի ուժի ազդեցության ողջ ժամանակահատվածի համար, և
- (iii) մյուս Կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները համապատասխանաբար նույնպես կասեցվում են նույն ժամկետով:

Անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված իր պարտավորությունը կատարել կամ պատշաճ կատարել չկարողացող Կողմը կրում է ապացուցման բեռը, որ 12.1 կետում նշված բոլոր պայմանները կատարված են:

Անհաղթահարելի ուժի ազդեցությանը ենթարկված Կողմը պարտավոր է՝

- (i) Անհաղթահարելի ուժի մասին տեղեկանալուց հետո հնարավորինս շուտ (բայց ոչ ուշ, քան 10 (տասն) օրվա ընթացքում) գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ նշելով տեղի ունեցած իրադարձության բնույթը, դրա կանխատեսվող տևողությունը և այն պարտավորությունները, որոնց վրա այն ազդում է,
- (ii) գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը՝ Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմացման, վերացման կամ հաղթահարման, ինչպես նաև հնարավորինս շուտ իր պարտավորությունների կատարումը վերսկսելու ուղղությամբ, և
- (iii) տեղեկացնել մյուս Կողմին իրավիճակի ցանկացած զարգացման և պարտավորությունների կատարումը վերսկսելու կանխատեսվող ժամկետի մասին:

Եթե Անհաղթահարելի ուժը կամ դրա ազդեցությունը շարունակում են խոչընդոտել Ծառայությունների մատուցմանը ավելի քան 60 (վաթսույն) օր՝ դրա վերաբերյալ առաջին ծանուցման ամսաթվից հաշված, ապա յուրաքանչյուր Կողմ կարող է սույն Պայմանագիրը դադարեցնել՝ մյուս Կողմին առնվազն 14 (տասնչորս) օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով, որից հետո Կողմերից ոչ մեկը այլևս պատասխանատվություն չի կրում, բացի մինչև դադարեցման օրը կուտակված պարտավորություններից:

§ 13. Term and Termination

13.1. This Agreement shall enter into force on the August 10, 2026 and shall remain in full force and effect until the later of:

- (i) the end of the 42nd month from the Effective Date; and
- (ii) the date on which all deliverables required under Annex 1 have been delivered by the Consultant, approved or deemed approved by the Client and

Գործողության ժամկետ և դադարեցում

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2026 թվականի օգոստոսի 10-ից և շարունակում է մնալ ամբողջությամբ ուժի մեջ և գործել մինչև հետևյալ ժամկետներից առավել ուշը՝

- (i) Ուժի մեջ մտնելու ամսաթվից հաշվված 42-րդ ամսվա ավարտը, և
- (ii) այն օրը, երբ Հավելված 1-ով պահանջվող բոլոր ներկայացվելիք նյութերը ներկայացվել են Խորհրդատուի կողմից, հաստատվել են կամ համարվել են հաստատված Պատվիրատուի և Շահառուի կողմից, և Պատվիրատուի կողմից

Beneficiary, and all payments have been made by the Client according to this Agreement.

կատարվել են սույն Պայմանագրի համաձայն վճարման ենթակա բոլոր վճարումները:

- 13.2. The Client may renounce from the Services (i.e. terminate the Agreement) at any time by giving the Consultant 20 (twenty) calendar days' prior written termination notice and subject to payment of the Consultant's actual expenses incurred up to the date of termination notice, provided that no actual expenses shall be payable in respect of any deliverable for which a full or reduced deliverable price is paid or payable under this Agreement. Clauses 13.6-13.7, the Parties acknowledging that the Allocated Deliverable Prices set out in Annex 1 fully include and cover all costs and expenses attributable to such deliverable.

For the avoidance of doubt, any other actual expenses claimed by the Consultant under this Clause shall be itemised by deliverable and supported by reasonable documentary evidence, failing which such expenses shall not be payable.

- 13.3. The Consultant may renounce from the Services (i.e. terminate the Agreement) at any time by giving the Client and the Beneficiary a 20 (twenty) calendar days' prior written termination notice and subject to full compensation of the Client's damages under the applicable law.

- 13.4. The Parties commit to attempt to settle any dispute arising out of or in relation to this Agreement in good faith by way of immediate negotiation before early termination of this Agreement.

- 13.5. Following receipt or issuance of the written notice on renouncement as per Clauses 13.2 or 13.3 of the Agreement, as the case may be, the Consultant shall immediately stop further provision of the Services and submit, within 1 (one) month, a report on the progress made up to the date of sending/receiving written termination notice (the **“Termination Report”**). The Termination Report shall list at least:
- (i) all the deliverables completed and duly submitted in accordance with Annex 1 / the workplan; and

Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել Ծառայություններից (այսինքն՝ դադարեցնել Պայմանագիրը)՝ Խորհրդատուին առնվազն 20 (քսան) օր առաջ գրավոր ծանուցելով դադարեցման մասին և պայմանով, որ կվճարի Խորհրդատուի՝ մինչև դադարեցման մասին ծանուցման օրը կատարված փաստացի ծախսերը, պայմանով, սակայն, որ որևէ ներկայացվելիք նյութի մասով, որի համար վճարվել կամ վճարման ենթակա է ամբողջական կամ նվազեցված արժեք՝ համաձայն սույն Պայմանագրի 13.6-13.7 կետերի, փաստացի ծախսեր առանձին վճարման ենթակա չեն: Կողմերը ընդունում են, որ Հավելված 1-ով սահմանված ներկայացվելիք նյութերի վերագրված արժեքներն ամբողջությամբ ներառում և ծածկում են տվյալ ներկայացվելիք նյութին վերաբերող բոլոր ծախսերը:

Տարընթերցումից խուսափելու համար, սույն կետի համաձայն Խորհրդատուի կողմից պահանջվող ցանկացած այլ փաստացի ծախս պետք է առանձնացված ներկայացվի ըստ յուրաքանչյուր ներկայացվելիք նյութի և հիմնավորվի ողջամիտ հիմնավորող փաստաթղթերով, հակառակ դեպքում այդպիսի ծախսերը վճարման ենթակա չեն:

Խորհրդատուն ցանկացած պահի կարող է հրաժարվել Ծառայություններից (այն է՝ դադարեցնել սույն Պայմանագիրը)՝ առնվազն 20 (քսան) օր առաջ Պատվիրատուին և Ծահառուին ներկայացնելով դադարեցման մասին գրավոր ծանուցում և Պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով՝ ըստ կիրառելի օրենսդրության:

Կողմերը պարտավորվում են մինչև Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը ջանքեր գործադրել՝ բարեխղճորեն լուծելու սույն Պայմանագրից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած հակասություն՝ անմիջական բանակցությունների միջոցով:

Պայմանագրի դադարեցման մասին Պայմանագրի 13.2 կամ 13.3 կետերով նախատեսված գրավոր ծանուցումն ստանալուց կամ ուղարկելուց (ըստ կիրառելիության) անմիջապես հետո Խորհրդատուն պետք է դադարեցնի Ծառայությունների հետագա կատարումը և 1 (մեկ) ամսվա ընթացքում հաշվետվություն ներկայացնի՝ մինչև գրավոր ծանուցումն ուղարկելու/ստանալու օրը կատարված աշխատանքների կարգավիճակի մասին (այսուհետ՝ **«Դադարեցման հաշվետվություն»**): Դադարեցման հաշվետվությունը պետք է առնվազն ներառի՝

- (i) Հավելված 1-ի / աշխատանքային պլանի համաձայն ամբողջությամբ ավարտված և

(ii) any deliverable left incomplete as of the date of the termination notice, with an estimated percentage of completion and the time required to potentially complete them properly.

13.6. Within 10 (ten) working days after receiving the Termination Report, the Client and the Beneficiary shall review it and notify the Consultant in writing which deliverables listed under Clause 13.5(ii), if any, the Client wishes the Consultant to complete.

For each deliverable listed under Clause 13.5(ii) which the Client requests the Consultant to complete after the termination notice date, the Parties may agree in writing a revised deadline for its completion and submission, and the full deliverable price specified in Annex 1 shall become payable only if that deliverable is subsequently completed, duly submitted and accepted or deemed accepted in accordance with this Agreement.

For any unfinished deliverable listed under Clause 13.5(ii) which the Client does not request the Consultant to complete after the termination notice date, or for which the Parties do not agree in writing on a revised deadline for its completion and submission, or which the Consultant does not complete and submit by the agreed revised deadline, no full deliverable price shall be payable for that deliverable. The Parties shall then discuss in good faith whether a reduced amount is payable for that deliverable. Any such reduced amount shall be expressly agreed in writing, shall not in any event equal or exceed the Allocated Deliverable Price for that deliverable mentioned in Annex 1 of this Agreement, and shall be determined considering: (a) the stage of completion as of the termination notice date, and (b) the extent to which any work product directly related to that deliverable and actually handed over by the Consultant to the Client and/or the Beneficiary by that date has independent practical value for the Client and/or the Beneficiary. If the Parties do not agree in writing on such reduced amount for a deliverable, the Client shall pay only the Consultant's actual expenses genuinely incurred up to the termination notice date in direct relation to that deliverable, provided that such expenses are itemised by deliverable, supported by reasonable documentary evidence, and do not in any event

պատշաճ ներկայացված բոլոր ներկայացվելիք նյութերը, և

(ii) դադարեցման մասին ծանուցման օրվա դրությամբ անավարտ մնացած յուրաքանչյուր ներկայացվելիք նյութ՝ դրա ավարտվածության գնահատված տոկոսի և այն պատշաճ ավարտին հասցնելու համար անհրաժեշտ ժամանակի նշումով:

Դադարեցման հաշվետվությունն ստանալուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն և Շահառուն պարտավոր են այն վերանայել և Խորհրդատուին գրավոր տեղեկացնել 13.5(ii) կետում նշված որ ներկայացվելիք նյութերը, եթե այդպիսիք կան, Պատվիրատուն ցանկանում է, որ Խորհրդատուն ավարտին հասցնի:

13.5(ii) կետում նշված յուրաքանչյուր այն ներկայացվելիք նյութի համար, որի ավարտումն ու ներկայացումը Պատվիրատուն պահանջում է դադարեցման մասին ծանուցման օրվանից հետո, Կողմերը կարող են գրավոր համաձայնեցնել դրա ավարտման և ներկայացման վերանայված վերջնաժամկետը, և Հավելված I-ով սահմանված տվյալ ներկայացվելիք նյութի ամբողջական արժեքը վճարման ենթակա կդառնա միայն այն դեպքում, եթե այդ նյութը հետագայում ամբողջությամբ ավարտվի, պատշաճ ներկայացվի և ընդունվի կամ համարվի ընդունված՝ սույն Պայմանագրին համապատասխան:

13.5(ii) կետում նշված ցանկացած անավարտ ներկայացվելիք նյութի դեպքում, եթե Պատվիրատուն չի պահանջում, որ Խորհրդատուն այն ավարտի դադարեցման մասին ծանուցման օրվանից հետո, կամ եթե Կողմերը գրավոր չեն համաձայնեցնում դրա ավարտման և ներկայացման նոր ժամկետը, կամ եթե Խորհրդատուն այն չի ավարտում և ներկայացնում համաձայնեցված նոր ժամկետում, ապա տվյալ ներկայացվելիք նյութի ամբողջական արժեքը վճարման ենթակա չէ: Այդ դեպքում Կողմերը բարեխղճորեն քննարկում են, թե արդյոք տվյալ ներկայացվելիք նյութի համար ենթակա է վճարման որևէ նվազեցված գումար: Այդպիսի ցանկացած նվազեցված գումար պետք է հստակորեն համաձայնեցվի գրավոր, որևէ դեպքում չպետք է հավասարվի կամ գերազանցի տվյալ ներկայացվելիք նյութի համար Պայմանագրի Հավելված I-ում սահմանված՝ Ներկայացվելիք նյութի արժեքը, և պետք է որոշվի բացառապես՝ հաշվի առնելով՝ (ա) դադարեցման մասին ծանուցման օրվա դրությամբ տվյալ ներկայացվելիք նյութի ավարտվածության աստիճանը, և (բ) այն չափը, որով տվյալ ներկայացվելիք նյութի հետ անմիջականորեն կապված և մինչև այդ օրը Խորհրդատուի կողմից փաստացի Պատվիրատուին և/կամ Շահառուին

equal or exceed the Allocated Deliverable Price for that deliverable.

For the avoidance of doubt, no actual expenses shall be separately calculated or payable in respect of any deliverable for which a full or reduced deliverable price is payable under this Clause.

- 13.7. For the purposes of premature termination settlement only, the Parties agree that each deliverable has an Allocated Deliverable Price set out in Annex 1. For the avoidance of doubt, such allocation does not change the payment schedule under Clause 5.3.

Upon premature termination initiated by either Party, the amount payable to the Consultant in respect of the Consultant's Services Fee shall be determined by comparing:

A. *Earned Amount*: the sum of (a) the Allocated Deliverable Prices for all deliverables that were completed and duly submitted by the termination notice date and were accepted or deemed accepted either by the termination notice date or pursuant to this Clause 13; plus (b) in respect of any deliverable listed under Clause 13.5(ii), either (i) the full Allocated Deliverable Price if the Client has requested in writing that the Consultant completes and submits that deliverable within the agreed new deadline and that deliverable is subsequently completed, duly submitted and accepted or deemed accepted in accordance with this Agreement, or (ii) such reduced amount, if any, as the Parties may expressly agree in writing pursuant to Clause 13.6; and

B. *Amounts Already Paid*: the total amount of instalments actually paid under Clause 5.3 up to the termination date in respect of the Consultant's Services Fee.

հանձնված որևէ աշխատանքային արդյունք ունի Պատվիրատուի և/կամ Ճահառուի համար ինքնուրույն գործնական արժեք: Եթե Կողմերը որևէ ներկայացվելիք նյութի վերաբերյալ գրավոր չեն համաձայնեցնում այդպիսի նվազեցված գումարը, ապա Պատվիրատուն վճարում է միայն Խորհրդատուի՝ մինչև դադարեցման մասին ծանուցման օրը տվյալ ներկայացվելիք նյութի հետ անմիջականորեն կապված և փաստացի կատարված ծախսերը՝ պայմանով, որ այդ ծախսերը ներկայացված են ըստ յուրաքանչյուր ներկայացվելիք նյութի, հիմնավորված են ողջամիտ հիմնավորող փաստաթղթերով և որևէ դեպքում չեն հավասարվում կամ գերազանցում տվյալ ներկայացվելիք նյութի համար սահմանված՝ Ներկայացվելիք նյութի արժեքը: Տարբերությունից խուսափելու համար՝ սույն կետով ամբողջական կամ նվազեցված չափով վճարման ենթակա որևէ ներկայացվելիք նյութի մասով փաստացի ծախսեր առանձին չեն հաշվարկվում և վճարման ենթակա չեն:

Միայն վաղաժամկետ դադարեցման դեպքում հաշվարկ կատարելու նպատակով Կողմերը համաձայնում են, որ յուրաքանչյուր ներկայացվելիք նյութ ունի Հավելված 1-ով սահմանված ներկայացվելիք նյութի արժեքը: Տարբերությունից խուսափելու համար նշվում է, որ նման վերագրումը չի փոփոխում 5.3 կետով սահմանված վճարման ժամանակացույցը:

Վաղաժամկետ դադարեցման դեպքում, անկախ նրանից՝ դա նախաձեռնվել է որ Կողմի կողմից, Խորհրդատուի Ծառայությունների վճարի վճարման ենթակա գումարը որոշվում է՝ համադրելով հետևյալը՝

Ա. *Հաստատված գումար*. (ա) դադարեցման մասին ծանուցման օրվա դրությամբ ամբողջությամբ ավարտված և պատշաճ ներկայացված բոլոր ներկայացվելիք նյութերի՝ իրենց վերագրված արժեքների հանրագումարը, պայմանով, որ դրանք ընդունվել կամ համարվել են ընդունված կամ մինչև դադարեցման մասին ծանուցման օրը, կամ սույն 13-րդ կետին համապատասխան, ինչպես նաև (բ) 13.5(ii) կետում նշված որևէ ներկայացվելիք նյութի մասով՝ կամ (i) ամբողջական վերագրված արժեքը, եթե Պատվիրատուն գրավոր պահանջել է, որ Խորհրդատուն ավարտի և ներկայացնի այդ նյութը՝ նոր համաձայնեցված վերջնաժամկետում, և այդ նյութը հետագայում ամբողջությամբ ավարտվել, պատշաճ ներկայացվել և ընդունվել կամ համարվել է ընդունված՝ սույն Պայմանագրին համապատասխան, կամ (ii) այնպիսի նվազեցված գումարը, եթե այդպիսին առկա է, որը Կողմերը կարող են հստակորեն գրավոր համաձայնեցնել՝ 13.6 կետին համապատասխան, և

If the Earned Amount exceeds the Amounts Already Paid, the Client shall pay the difference. If Amounts Already Paid exceed the Earned Amount, the Consultant shall refund the difference to the Client or the Client may set off such amount against any amount payable to the Consultant.

- 13.8. Where the Client has requested completion of any deliverable under Clause 13.6, the submission, review, acceptance and deemed acceptance of that deliverable shall follow Clauses 5.4 and 5.5, mutatis mutandis, except that the relevant amount shall be recorded in the Termination Handover and Acceptance Certificate under this Clause 13.8 and no separate Handover and Acceptance Certificate shall be required. After the determination of the amounts payable under Clause 13.7, the Parties shall sign a Termination Handover and Acceptance Certificate stating separately the deliverable prices payable, the Variable Component amounts payable, and the final amount, if any, remaining payable by one Party to the other at that stage after all such amounts have been taken into account. If the Certificate shows that the Client must pay an amount to the Consultant, the Consultant may issue the corresponding invoice, and the Client shall pay it within 30 (thirty) calendar days of receipt. If the Certificate shows that the Consultant must return an amount to the Client, the Consultant shall refund that amount within 30 (thirty) calendar days, or the Client may set off that amount against any amount payable to the Consultant.

Any undisputed amounts shall be settled notwithstanding any outstanding disagreement in relation to any other issue.

Any disagreement arising from the Termination Report, the Termination Handover and Acceptance Certificate, or the amounts payable on termination shall be resolved in accordance with Section 14.

Բ. Արդեն վճարված գումարները. դադարեցման օրվա դրությամբ 5.3 կետի համաձայն Խորհրդատուի ծառայությունների վճարի փաստացի վճարված փուլային վճարումների ընդհանուր գումարը:

Եթե Վաստակած գումարը գերազանցում է Արդեն վճարված գումարները, Պատվիրատուն պարտավոր է տարբերությունը վճարել: Եթե Արդեն վճարված գումարները գերազանցում են Վաստակած գումարը, Խորհրդատուն պարտավոր է տարբերությունը վերադարձնել Պատվիրատուին կամ Պատվիրատուն կարող է այդ գումարը հաշվանցել Խորհրդատուին վճարման ենթակա ցանկացած այլ գումարի հաշվին:

Եթե Պատվիրատուն 13.6 կետի համաձայն պահանջել է որևէ ներկայացվելիք նյութի ավարտում, ապա այդ ներկայացվելիք նյութի ներկայացումը, ստուգումը, ընդունումը և ընդունված համարվելը կատարվում են 5.4 և 5.5 կետերով սահմանված կարգով՝ mutatis mutandis սկզբունքով, բացառությամբ այն բանի, որ համապատասխան գումարը պետք է արձանագրվի սույն 13.8 կետով նախատեսված Դադարեցման հանձնման-ընդունման ակտում, և առանձին Հանձնման-ընդունման ակտ չի պահանջվում: Պայմանագրի 13.7 կետով նախատեսված վճարման ենթակա գումարները որոշելուց հետո Կողմերը ստորագրում են Դադարեցման հանձնման-ընդունման ակտ, որում առանձին նշվում են վճարման ենթակա ներկայացվելիք նյութերի արժեքները, Փոփոխական բաղադրիչի վճարման ենթակա գումարները, ինչպես նաև այդ բոլոր գումարները հաշվառելուց հետո տվյալ փուլում Կողմերից մեկի կողմից մյուսին վճարման ենթակա վերջնական գումարը, եթե այդպիսին առկա է: Եթե ակտով արձանագրվում է, որ Պատվիրատուն պետք է գումար վճարի Խորհրդատուին, ապա Խորհրդատուն կարող է ներկայացնել համապատասխան հաշիվը, իսկ Պատվիրատուն պարտավոր է այն վճարել ստացման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Եթե ակտով արձանագրվում է, որ Խորհրդատուն պետք է որևէ գումար վերադարձնի Պատվիրատուին, ապա Խորհրդատուն պարտավոր է այդ գումարը վերադարձնել 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, կամ Պատվիրատուն կարող է այդ գումարը հաշվանցել Խորհրդատուին վճարման ենթակա ցանկացած գումարի հաշվին:

Ցանկացած անվիճելի գումար ենթակա է հաշվարկման և վճարման՝ անկախ որևէ այլ հարցի շուրջ առկա չլուծված անհամաձայնությունից:

Դադարեցման հաշվետվությունից, Դադարեցման հանձնման-ընդունման ակտից կամ դադարեցման դեպքում վճարման ենթակա գումարներից բխող ցանկացած տարաձայնություն լուծվում է 14-րդ բաժնին համապատասխան:

§ 14. Governing Law, Settlement of Disputes

Կիրառելի օրենք, վեճերի լուծում,

- 14.1. This Agreement shall be governed by, interpreted, and construed in accordance with the laws of the Republic of Armenia .
- 14.2. If any issue, dispute, difference, or claim arises out of or in connection with this Agreement, including any issue regarding its existence, validity, performance, or termination (the “**Dispute**”), of which a Party has given written notice to the other Parties, senior management personnel of the Parties shall meet and diligently attempt to resolve the Dispute in good faith through negotiations.
- 14.3. If such Dispute has not been fully resolved by negotiation as described under Clause 14.2. of this Agreement within 30 (thirty) calendar days from the beginning of such negotiations, either Party may refer the Dispute to mediation in accordance with the Swiss Rules of Mediation of the Swiss Arbitration Centre¹ (the “**SAC Rules of Mediation**”) in force as of the date when the Dispute was submitted to mediation.
- (a) The Parties will jointly designate a mediator. In the event that the Parties are unable to designate a mediator within 14 (fourteen) calendar days, the mediator shall be appointed in accordance with the SAC Rules of Mediation.
- (b) The seat of mediation shall be Geneva, Switzerland. The meetings may be conducted in any place agreed by the Parties in writing.
- (c) The language of mediation and all correspondence and documentation related to it is English.
- 14.4. If such Dispute has not been fully resolved by mediation within 60 (sixty) calendar days from the date when the mediator has been confirmed or appointed in accordance with the SAC Rules of Mediation, it shall be settled by arbitration in accordance with the Swiss Rules of International Arbitration of the Swiss Arbitration Centre (the “**SAC Rules of Arbitration**”) in force as of the date when the Notice of Arbitration was submitted in accordance with the SAC Rules of Arbitration.
- (a) The arbitral tribunal shall consist of a sole arbitrator, whose appointment is to be agreed upon by the
- Սույն Պայմանագիրը պետք է կարգավորվի և մեկնաբանվի Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:
- Սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված որևէ խնդրի, վեճի, հակասության կամ պահանջի դեպքում, այդ թվում՝ Պայմանագրի գոյության, վավերության, կատարման կամ դադարեցման հետ կապված որևէ խնդրի (այսուհետ՝ «**Վեճ**») դեպքում, որի մասին Կողմը գրավոր ծանուցել է մյուս Կողմերին, Կողմերի ղեկավար մարմինները պետք է հանդիպեն և գործադրեն լավագույն ջանքերը՝ Վեճը բարեխղճորեն լուծելու համար:
- Եթե Վեճն ամբողջությամբ չի լուծվում Պայմանագրի 14.2. հոդվածով նկարագրված բանակցությունների միջոցով այդ բանակցություններն սկսելու օրվանից հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, ապա յուրաքանչյուր Կողմ կարող է Վեճն ուղարկել հաշտարարության՝ համաձայն Շվեյցարիայի արբիտրաժային կենտրոնի² Վեճը հաշտարարության ուղարկելու պահին գործող՝ Հաշտարարության շվեյցարական կանոնների (այսուհետ՝ «**ՇԱԿ հաշտարարության կանոններ**»):
- Կողմերը միասին նշանակում են հաշտարարին: Կողմերի կողմից 14 (տասնչորս) օրացուցային օրվա ընթացքում հաշտարար նշանակվելու դեպքում հաշտարարը նշանակվում է՝ ՇԱԿ հաշտարարության կանոնների համաձայն:
